





ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱԿ Դաշինքի նախկին անդամներից շատերը չեն մասնակցի Եռեակի հանրահավաքին



Տեսարան մը Եռեակի նախապատրաստական հանրահավաքին

«Հայ Ազգային Գոնկրէս» դաշինքի նախկին անդամներից շատերը ՀՀԾ-ն, «Հանրապետութիւն»-ը, «Ազատ Դեմոկրատներ»-ը, Նախախորհրդարանը, մտադիր չեն մասնակցել Հոկտեմբերի 10-ին հրաւիրուած հանրահավաքին:

«Հայոց Համագոյն Շարժում» կուսակցութեան վարչութեան անդամ Յովհաննէս Իգիթեանը Tert.am-ի հետ զրոյցում ասաց, որ եռեակի հրաւիրած համապետական հանրահավաքին չի մասնակցի եւ՝ որպէս քաղաքական գործիչ, եւ՝ որպէս քաղաքացի, քանի որ ակնկալիքներ չունի:

«Այն, ինչ ես տեսել եմ, ինձ չի ոգեւորում: Եռեակի հանրահավաքից ես չեմ տեսնում որեւէ հեռանկար, ինչը ցաւով եմ ասում, իրօք յաջողութիւն եմ մտածում քառեակին, որը դառաւ եռեակի թող վաղը եօթ կուսակցութիւն միասին լինեն, բայց երեւի թէ ինձ հետ կանգնած հարիւր հազարաւոր ժողովուրդն էլ ակնկալիք ունէր 2008 թ.-ին, հիմա չունի, ես էլ չունեմ», - ասաց նա:

Յովհաննէս Իգիթեանը հարց է տալիս, թէ իշխանափոխութիւն պահանջում են: «Ո՞վ է խօսում իշխանափոխութիւնից, արտաքին քաղաքականութեանն ուղղուած ամենակարեւոր հարցերից՝ ո՞ւր է գնում Հայաստանը: Ես հիմնական խօսողներից չեմ լսում այդ հարցերը, երեւի թէ մի ծրագիր ունեն, որը ենթադրում է, որ պէտք է իշխանափոխութեան բերի:

«Հանրապետութիւն» կուսակցութիւնը եւս չի մասնակցելու եռեակի կողմից հրաւիրուած հանրահավաքին», - Tert.am-ի հետ զրոյցում ասաց կուսակցութեան անդամ Սուրէն Աբրահամեանը, իսկ թէ ինչու՞ խորհուրդ է տալիս բոլոր հարցերն ուղղել եռեակին: «Մեր գաղափարախօսութիւնից, մեր սկզբունքներից ելնելով՝ մենք չենք մասնակցի այդ հանրահավաքին: Մենք դրա հետ ոչ մի առնչութիւն չունենք, իրենց էլ յաջողութիւն ենք մտածում», - ասաց նա եւ նշեց, որ օրեր առաջ Արամ Սարգսեանն այս մասին հարցազրոյց է տուել ու մանրամասն ներկայացրել կուսակցութեան դիրքորոշումը:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան մամուլի խօսնակ Անժէլա Խաչատրեանը Tert.am-ի հետ զրոյցում տեղեկացրեց, որ կուսակցութիւնը չի մասնակցի հոկտեմբերի 10-ի հանրահավաքին, քանի որ հանրահավաքում չի հնչելու

Հայաստանի աշխարհաքաղաքական ընտրութեան հարցով որեւէ պահանջ: «Իսկ մենք գիտենք, որ հոկտեմբերի 10-ին գուզահեռ տեղի է ունենում ԵՏՄ խորհրդաժողովը, որի ժամանակ, հաւանական է, որ պէտք է ստորագրուի ՀՀ-ի անդամակցութեան փաստաթուղթը, թէեւ հակասական կարծիքներ կան՝ ի վերջոյ կը ստորագրուի, թէ՞ չի ստորագրուի, քիչ է մնացել, շուտով կիմանանք վերջնական արդիւնքը: Այնուամենայնիւ, հոկտեմբերի 10-ին նման իրադարձութեանը գուզահեռ Հայաստանում անցկացնել հանրահավաք եւ չխօսել նման կարեւոր իրադարձութեան մասին, չխօսել ՀՀ-ի աշխարհաքաղաքական ուղղուածութեան մասին՝ ո՞ւր ենք գնում, ի՞նչ ճիւղ ենք ընտրում գարգացման՝ զարգացում, թէ՞ յետընթաց, այդ մասին չխօսել եւ չբարձրաձայնել, մեզ թւում է, որ տեղին չէ եւ գտնում ենք, որ դրանով երկրի կարեւոր հարցերի օրակարգից շեղում է տեղի ունենում», - ասաց նա:

Հարցին, որ նոյնիսկ եթէ իշխանափոխութեան հարց բարձրացուի, Անժէլա Խաչատրեանը պատասխանեց. «Իսկ ո՞վ է ասել, որ իշխանափոխութիւն են իրենք պահանջում: Մենք հետեւում ենք իրադարձութիւններին, եւ մինչեւ վերջ էլ քառեակի, յետոյ եռեակի, գուցէ հիմա էլ երկեակի միջեւ վերջնական կոնսենսուս չկայ այդ հարցի հետ կապուած՝ ի վերջոյ պահանջելու են իշխանափոխութիւն, թէ չէ, եւ քանի որ այստեղ էլ յստակ որոշում չկայ, որպէսզի գնանք եւ մենք էլ մասնակցենք, այդ իսկ պատճառով նպատակաւոր մար չի գտնում կուսակցութիւնը մասնակցել այդ հանրահավաքին»:

Նախախորհրդարանի անդամ Հրանուշ Խաչատրեանն ասաց, թէ զբաղուածութեան պատճառով չի մասնակցելու եռեակի հրաւիրած հանրահավաքին: «Որեւէ պատճառ չկայ, սկզբունքային տարածաչափութիւն չկայ, ուղղակի զբաղուած եմ», - ասաց տիկին Խաչատրեանը՝ շարունակելով նաեւ, թէ մասնակցելու հրաւէր չի էլ ստացել:

Չեն մասնակցի նաեւ նախկին ՀԱԿ դաշինքին մաս կազմող «Ժողովրդավարական հայրենիք կուսակցութիւնը», որի մասին Tert.am-ին ասել էր կուսակցութեան նախագահ Պետրոս Մակեանը, ինչպէս նաեւ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը:

«Օլիգարխ Ընդդիմադիր Դժուար Եմ Պատկերացում» Կարեն Քոչարեան

Անկախ նրանից՝ ով ինչ է ասում, միեւնոյն է՝ ԲՀԿ-ն ունի իր քաղաքական եւ օլիգարխիկ թեւը, եւ ինչպէս շատ քաղաքական կառույցներ Հայաստանում, ԲՀԿ քաղաքական թեւը եւս շատ աւելի փոքր է, քան օլիգարխիկը: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց քաղտեխնոլոգ Կարեն Քոչարեանը՝ ի պատասխան մեր հարցի, թէ ինչպէս է մեկնաբանում ԲՀԿ-ականների յայտարարութիւնների «սրբագրումները»:



Քաղաքական մասնագետ՝ Կարեն Քոչարեան

«Վաղուց եմ ասել՝ օլիգարխ ընդդիմադիր դժուար եմ պատկերացնում, չի լինում նման բան, չեմ պատկերացնում օլիգարխի, ով կարող է կանգնել ընդդիմադիր հարթակում եւ յայտարարել, որ ինքը պահանջում է իշխանափոխութիւն, քաղաքական թեւը կարող է յայտարարել եւ պահանջներ դնել», - ասաց նա:

Կարեն Քոչարեանը ԲՀԿ-ի քաղաքական թեւի հետեւորդներից է համարում Վահէ Յովհաննիսեանին, Ստեփան Մարգարեանին, Նաիրա Զոհրապեանին, Վարդան Օսկանեանին, իսկ օլիգարխիկ թեւի ներկայացուցիչներից են Կարօ Կարապետեանը, Գրիգորի Մարգարեանը եւ այլն, ովքեր արդէն յայտարարել են, թէ չեն մասնակցելու Հոկտեմբերի 10-ին կայանալիք եռեակի հանրահավաքին:

Նոյն խնդրերը ՀՀԿ-ում կայ, իսկ ԲՀԿ-ում դա աւելի ցայտուն է, քանի որ քաղաքական թիմը շատ աւելի փոքր է, քան օլիգարխիկը: «Որովհետեւ երբ քաղաքականը սկսում է կապուել օլիգարխիկին, ունենում ենք այն, ինչ ունենք, արդիւնքում՝ զաղափարը պարտ-

ւում է փողին», - ասաց Կարեն Քոչարեանը: Քաղտեխնոլոգը շեշտում է, որ բախումը կայ նաեւ աւելի փոքր եւ օլիգարխիկ թեւ չունեցող կուսակցութիւնների դէպքում, օրինակ՝ Ռուբէն Յակոբեանը նոյն հարթակում ելույթ է ունենալու, իսկ Զարուհի Փոստանջեանը յայտարարում է, որ չի գնալու հանրահավաքին:

Յիշեցնենք, որ ԲՀԿ-ից Նաիրա Զոհրապեանը յայտարարում էր, որ ԲՀԿ-ն իշխանափոխութիւն է ուզում, իսկ մէկ այլ ԲՀԿ-ական Ստեփան Մարգարեանը յայտարարեց, որ ԲՀԿ-ն ընդդիմութիւն չի:

Իր հերթին Զոհրապեանը սրբագրել է Ստեփան Մարգարեանի ասածը, թէ եռեակի առաջնորդները կը լինեն Օբերայի հարթակում, ասելով, որ կը լինեն, բայց օրը յայտնի չէ:

«Եռեակը պասիւ է արտաքին մարտահրաւերների գնահատականներ տալու հարցում» Զրանոյշ Խաչատրեան

Ազգազրագէտ Հրանոյշ Խաչատրեանը ողջունում է ոչ իշխանական եռեակի Հոկտեմբերի 10-ի հանրահավաքը, բայց ցաւալի է համարում, որ եռեակը պասիւութիւն է ցուցաբերում արտաքին քաղաքականութեան մարտահրաւերներում գնահատականներ տալուց:

«Կամ նրանք գիտեն մի բան, որ չգիտենք մենք, այսինքն՝ հանրութեանը դեռ ներկայացուած չէ, ինչին կասկածում եմ, կա՞մ ուղղակի նրանց ուժը բաւարարում է այսքանին: Եւ երրորդ՝ նրանց իրական խնդիրը իշխանութեան մէջ իրենց մասը գտնելն է կամ իրենցը դարձնելը», - այլազրոյցների հետ հանդիպման ասաց Հրանոյշ Խաչատրեանը:

Ամէն դէպքում, Հրանոյշ Խաչատրեանը նշեց, որ այս հանրահավաքները ցոյց կը տան յառաջիկայ ներքին զարգացումները:

Ինչ վերաբերում է հարցին, թէ ինքը մասնակցելու է հանրահավաքին, պատասխանեց, որ Նախախորհրդարանը պաշտօնապէս չի մասնակցելու, իսկ ինքն էլ զբաղուած է, բայց եթէ անգամ զբաղուած չլիներ՝ չէր մասնակցի: «Ես ունեմ ներքին ընդգլուծ եռեակի ու նրանց օրակարգի հանդէպ», - ասաց նա:

Եւսիվ Պատգամաւորների Մի Խումբ Ֆինանսաւորում է Ատրպէյճանի Կողմից

Հայկական կողմը յայտարարել է, որ չի համագործակցելու Եւրախորհուրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) գեկուցողի հետ, դա կարող է լուրջ հետեւանքների հանգեցնել եւ նոյնիսկ նրան, որ Հայաստանը կարող է դուրս գալ Եւրախորհուրդից: Այս մասին յայտարարեց Ազգային ժողովի ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը՝ անդրադառնալով ԵՆԽՎ-ում «Լեւոնային Ղարաբաղում եւ գրաւեալ այլ տարածքներում բռնութեան սրացումը» անուանումով գեկուցի պատրաստման հարցին:

Չուսուցող ԵՆԽՎ քանադեան իրականութեան չունեն, դրանք, ըստ պատգամաւորի, քաղաքական համապատասխան մթնոլորտ են ստեղծում: «Նման ձեւակերպումները հաւաքում են եւ մտածելակերպի օրինակ դառնում միջազգային հանրութեան համար», - մտահոգութիւն յայտնել ՀԱԿ խմբակցութեան ղեկավարը:

Նրա խօսքով, ԵՆԽՎ-ում կան մի խումբ պատգամաւորներ, որոնք

# ԼՈՒՐԵՐ

## «Հայաստանը Սօս Է ԵՏՄ-ին, Սակայն Առկայ Է Դեռ Ղարաբաղի Հարցը»

Մի քանի օր է մնացել նախաքան, ինչպես ենթադրում էր, Հայաստանը կը մտնի Եւրասիական Միութեան կազմի մէջ, իսկ Լեռնային Ղարաբաղի հարցը դեռ օրակարգում է: Այդ մասին իր «ԵՏՄ Խճճուած Կուրսը» յօդուածում գրում է լրագրող Քեյսի Միշէլ:

Լրագրողը յիշեցնում է, որ Մայիսի 29-ի գազաթափողովի ընթացքում Աստանայում Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը կտրուկ «արգելափակեց Հայաստանի ծրագրուած անդամակցումը միութեանը որպէս լիիրաւ անդամ»: Վկայակոչելով ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիևի նամակը՝ Նազարբաևը նշեց, որ Հայաստանը կը կարողանայ ԵՏՄ կազմի մէջ մտնել միայն ՄԱԿ-ի կողմից ճանաչուած սահմաններով: Ընդ որում, հեղինակն ընդգծում է, որ Ղրիմի հարցին չեն անդրադարձել:

Որոշ տեղեկութիւնների համաձայն, գրում է հեղինակը, Հայաստանը «կուլ է տուել» Ղազախստանը նկատողութիւն ու մտադիր էր ԼՂՀ-ն դուրս թողնել ԵՏՄ մաքսային սահմաններից:

«Սակայն սա ոչ միայն հակասում է Երեւանի պաշտօնական դիրքին, այլ նաեւ հայերի մեծամասնութեան կարծիքին եւ անտեսում է Մոսկուայի վստահեցումներն այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի հարցը չի խոչընդոտելու Հայաստանի անդամակցութեանը», - յաւելել է լրագրողը:

Այնուհետ նա մէջբերում է ԼՂՀ վարչապետ Արայիկ Յարութիւնեանի խօսքն այն մասին, որ Հայաստանի ու ԼՂՀ միջեւ չի կարող մաքսային անցակէտ լինել, քանի որ «մաքսային կէտի առկայութիւնը նշանակում է սահմանի վերահսկողութիւն, իսկ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջեւ տանակա ճանապարհներ կան, որոնք տեխնիկապէս հնարաւոր է վերահսկել:

Այնուամենայնիւ, լրագրողի խօսքով, Ղազախստանը պահպանում է իր դիրքերը: Հայաստանի անդամակցութեան մասին համաձայնութեան ստորագրումն արդէն մի քանի անգամ յետաձգում է եւ հնարաւոր է, որ Մոսկուան ստիպուած լինի եւս մէկ անգամ յետաձգել:

## Յանձնակատարը Կենտրոնացել Է ՀՀ-ում Մարդու Իրաւունքների Հարցի Վրայ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը ընդունել է Եւրոպայի Խորհրդի Մարդու Իրաւունքների յանձնակատար Նիլս Մուրիթսիկսի գլխաւորած պատուիրակութեանը:

Սերժ Սարգսեանը ողջունել է հիւրերին եւ ընդգծել, որ Հայաստանը մեծապէս կարեւորում է Եւրոպայում մարդու իրաւունքների հիմնական երաշխաւոր հանդիսացող կառույցի՝ ԵԽ-ի հետ համագործակցութիւնն ու վերջինիս աջակցութիւնը մեր երկրում իրականացուող շարունակական բարեփոխումներին: Նախագահի խօսքով, այդ ամէնում, անշուշտ, մեծ դեր է վերապահուած ԵԽ մարդու իրաւունքների յանձնակատարի ինստիտուտին, որի հետ Հայաստանն աւանդաբար կառուցողական եւ փոխշահաւէտ միջոցառումներ արդիւնաւէտ համագործակցութիւն է ունեցել: Սերժ Սարգսեանը գոհունակութեամբ է արձանագրել, որ պարոն Մուրիթսիկսի պաշտօնավարման ընթացքում էլ այդ փոխգործակցութիւնը շարունակուում է եւ վստահութիւն է յայտնել, որ ԵԽ մարդու իրաւունքների յանձնակատարի այցելութիւնը Հայաստան նոր խթան կը հանդիսանայ երկկողմ յարաբերութիւններում:

Նիլս Մուրիթսիկսը նշել է, որ տարբեր երկրներ իր այցելութիւնների ժամանակ աշխատանքային յազմեցած օրակարգից տուեալ երկրի համար առաւել կարեւոր որոշակի խնդիրներ է առանձնացնում, որոնց վրայ էլ կենտրոնանում է հանդիպումների ընթացքում: Հայաստան այցելելիս, ըստ նրա, որոշել են կենտրոնանալ դատական համակարգի բարեփոխումների, կանանց եւ տղամարդկանց հաւասարութեան ու ընտանեկան բռնութիւնների դէմ պայքարի հարցերի վրայ: ԵԽ մարդու իրաւունքների յանձնակատարն ընդգծել է, թէ ուրախ է տեղեկանալ, որ այդ բնագաւառներում առաջընթաց է արձանագրուել:

Հանդիպման ընթացքում գրուցակիցներն անդրադարձել են ՀՀ սահմանադրական բարեփոխումների գործընթացին, ԵԽ-ին անդամակցելուց յետոյ Հայաստանի ստանձնած պարտաւորութիւնների կատարման ընթացքին:

Հանդիպման ընթացքում գրուցակիցներն անդրադարձել են ՀՀ սահմանադրական բարեփոխումների գործընթացին, ԵԽ-ին անդամակցելուց յետոյ Հայաստանի ստանձնած պարտաւորութիւնների կատարման ընթացքին:

## Գերմանիոյ Միջեկեղեցական Խորհուրդ

Շարունակուած էջ 1-էն

Չազգային հանրութեան վրայ: Նոյնիսկ եթէ այսօր գրեթէ վերապրողներ չկան, ցաւի եւ անարդարութեան ճանաչումը կը շարունակէ մնալ արդիական:

«Մենք կը յարգենք հայ, ինչպէս նաեւ շուրջ 600 հազար արամեացի, ասորի եւ յոյն քրիստոնէաներու, ներառեալ կաթողիկոսներու ու բողոքականներու, յիշատակը՝ որոնք սպաննուեցան իրենց հայ եղբայրներու եւ քոյրերու հետ միասին: Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ջանքերը Հայ եկեղեցիներուն հարտաւորութիւն ընձեռեց իրենց ձայնը բարձրացնելու եւ պայքարելու 20-րդ դարու առաջին քննադատութեան ճանաչման համար, միշտ գնահատուած է հայ եկեղեցւոյ կողմէ:

«Գերմանիոյ Հայ-առաքելական եկեղեցին Միջեկեղեցական Խորհուրդի անդամ եկեղեցի է, որուն հետ համերաշխ 2015-ին մենք կ'ոգեկոչենք Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը:

«2005 թուականին Գերմանիոյ Պուրկաթապը (Խորհրդարանը) մատնանշած է Գերմանիոյ պատմական ու բարոյական պատասխանատուութիւն այս հարցով: Որպէս Գերմանիոյ մէջ գործող եկեղեցիներ, մենք միասնաբար կը կրենք այս պատասխանատուութիւնը եւ անհրաժեշտ կը համարենք ամէն անգամ յիշեցնել զայն:

«Ուստի 2014-ին Մարտի 1-ի պուրկի մէջ կայացած Միջեկեղեցական Խորհուրդի ժողովը իր անդամ եկեղեցիներն ու համայնքները կը քաջալերէ եւ կոչ կ'ընէ, աղօթքով եւ յիշատակի միջոցա-

## ՄԱԿ-ի Գերագոյն Յանձնակատարի Գրասենակը Դատապարտել Է Տէր Զորի Եկեղեցու Աւերումը

ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենակը դատապարտել է «Իսլամական պետութեան» գրոհայինների կողմից Տէր Զորի հայկական եկեղեցու աւերումը:



Տէր Զորի հայկական եկեղեցին աւերակի վերածուած

«Մեզ տեղեկացրել են, որ Սեպտեմբերի կէսերին ԻՊ-ն աւերել է Սիրիայի Տէր Զորի հայկական եկեղեցին: Մենք դատապարտում ենք եկեղեցու եւ կրօնական այլ կառույցների աւերումը», - ասում է յանձնակատար Ռուպերտ Գոլվիլի մամուլի քարտուղարի յայտարարութիւնում:

Յայտարարութիւնում ընդգծուում է, որ նման պահուածքը յատուկ է ԻՊ-ի համար, որի անդամները պայթեցնում են մզկիթներ եւ սրբավայրեր, աւերում եկեղեցիներ իրաքի հիւսիսում: Կառավարական ուժերի եւ հակակառավարական զինուած խմբաւորումների գործողութիւնների հետեւանքով շարունակուում են աւերուել հոգեւոր ժառանգութեան եւ հնագիտական յուշարձաններ:

Միաժամանակ ընդգծուում է, որ հակակառավարական զինուած խմբաւորումների յարձակումների դէպքերը կրօնական կառույցների, ներառեալ՝ Սիրիայի եկեղեցիների վրայ,

նոյնպէս աւելացել են այս տարի:

Բացի դրանից, կառավարական զօրքերը շարունակում են ռազմական օբիեկտներ տեղակայել մշակութային կառույցների շուրջ եւ դրանք վերածել զօրամասերի: «Մենք նաեւ անհանգստացած ենք, որ 2013 թ. Ապրիլին Հալէպից առեւանգուած արքեպիսկոպոսներ Յովհաննէս Իբրահիմի եւ Պողոս Եսազիճի եւ Յունուարին էր Ռազաից առեւանգուած հայր Բաորի Օպլիոյի գտնուելու վայրն անյայտ է մնում: Մենք ընդգծում ենք, որ հոգեւոր անձնակազմը եւ կրօնական հաստատութիւնները օգտուում են յատուկ պաշտպանութիւնից՝ միջազգային հումանիտար իրաւունքին համապատասխան, եւ պէտք է յարգուեն եւ պաշտպանուեն բոլորի կողմից», - ասում է յայտարարութիւնում:

## Թուրքիայի Գազի Համալսարանում Հակահայկական Մրցոյթ Է Յայտարարուել

Թուրքիայի Գազի Համալսարանի գեղարուեստի ֆակուլտետում յայտարարուել է «Հայերի դաժանութիւնը պատկերող աֆիշի միջազգային մրցոյթ», հարողում է Ermenihaber.am-ը: Արդիւնքներին հրապարակման համար ընտրուել է Հրանդ Դինքի սպանութեան օրը՝ Յունուարի 19-ը: Այս մասին տեղեկացնում է Ստամբուլում հրատարակող հայկական «Ակօս» երկրագր (հայերէն, թուրքերէն) շաբաթաթերթը:

Մրցոյթը կազմակերպուել է վերոնշեալ ֆակուլտետի եւ Թուրքիայում Ատրպէյճանի դեսպանութեան համագործակցութեամբ: Մրցոյթի յայտարարութեան մէջ

մասնաւորապէս նշուած է, որ թուրքերը իբրեւ թէ զթասիրտ են եղել, բայց հայերի դաւաճանութեան հետեւանքով վերջ է դրուել երկու ժողովուրդների միջեւ եղած երբեմնի հաւատարմութեանը:

Ֆակուլտետի ղեկան պրոֆեսոր Ալեւ Չաքմաբօղլուն ասել է, որ, մրցոյթի նպատակը առաջին աշխարհամարտի ընթացքում եւ յետոյ թուրք ազգի նկատմամբ հայերի իրականացրած կոտորածներն անտարբերութեան մատնած աշխարհին սթափեցնելն է: Մրցոյթին մասնակցելու կոչ է արուել բոլոր այն արուեստագէտներին, ովքեր «կարեւորում են մարդու իրաւունքները»:

## Ռուսաստանեան Փոխանցումներ

Շարունակուած էջ 1-էն

մի շարք բացասական հետեւանքների: Ռուսական կապիտալի արտահոսքն, աւելի ճիշդ փախուստը (տասնեակ միլիարդ դոլարներով) արտասահման, օտարերկրացիները դրոյնների հետաքրքրութեան թուլացումը վատատեսական կանխատեսումներ են կատարում առաջիկայում Ռուսաստանի տնտեսութեան վերականգնման կապակցութեամբ: Ամենից բացի, չի բացառուում նաեւ համաշխարհային

գնի նուազման վտանգը, որի արտահանման եկամուտները Ռուսաստանի պետական բիւջէի առաջատարն է:

«Մէկ այլ բացասական երեւոյթ է ռուբլու անկումն ամերիկեան տոլարի նկատմամբ: Օգոստոսին տոլարի միջին անուանական փոխարժէքը ռուբլու նկատմամբ տարուայ կտրուածքով աճել է 9,4 տոկոսով: Այս գործօնը, բնականաբար, անդրադարձել է դրամական փոխանցումների վրայ Ռուսաստանից, որոնք իրականացուում են ռուբլու տոլարի փոխանցմամբ»:

ուումներով ոգեկոչել զայն»:

Ժողովը անդրադարձած է նաեւ Միջեկեղեցական Խորհուրդի նախագահութեան 2012-ի առաջարկին՝ տեղեւում մէջ կազմակերպել միասնական միջոցառումներ հայ-առաքելական, ասորի-ուղղա-

փառ եւ յոյն-ուղղափառ եկեղեցիներուն հետ: Բոլոր եկեղեցիներուն մէջ աղօթքի հրակէրը պէտք է լսելի դարձնել եկեղեցւոյ զանգերու դողանքով եւ որպէս միասնական ժամ առաջարկուած է 2015-ի Ապրիլ 24-ին ժամը 17:00-ն:

### ՀԱՅ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՆՊԱՍՏԸ ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹԵԱՆ



Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադրութեան 60-ամեակի գործունէութեանց ծիրէն ներս, անցեալ Ուրբաթ, Հոկտեմբեր 3, 2014 Կլենտէյլի Կեդրոնական գրադարանին մէջ տեղի ունեցաւ ինքնատիպ միջոցառում մը նուիրուած հայ գորգագործութեան:

Ընտրանի հասարակութեան մը առջեւ ելոյթ ունենալով ՆՍՄՄ-ի վարչութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան, հակիրճ գեկուցումով մը ներկաներուն ծանօթացուց հայ կերպարուեստի մասնաւորաբար գորգագործութեան քաջատեղեակ Հրաչ Կէօզիւպէտի կեանքը: Ան ըսաւ թէ գորգագործութիւնն առնչուած է մեր աւանդութեանց մէջ, յատկապէս Ղազարուս Աղայեան «Անահիտ» վէպին մէջը:

Այնուհետեւ շահեկան դասախօսութիւն մը տուաւ Հրաչ Կէօզիւպէտի կեանքեան եւ բարձր գնահատեց մեր դարաւոր մշակոյթին մաս կազմող հայ գորգագործութիւնն ու անոր առանձնապատկութիւնները: Մասնաւորաբար գեղարուեստական ձեւաւորումները, գոյներու ներդաշնակութիւնները, ազգային ոճի առկայութիւնն ու թաքուն ծածկագիրներու նշանակութիւնը, եւայլն: Արդարեւ ներկայիս նոր դարթօնք մը կ'ապրի հայկական



գորգագործութիւնը թէ Արցախի եւ թէ Հայաստանի մէջ:

Աւարտին՝ ներկաները մօտէն ծանօթացան տեղւոյն վրայ ցուցադրութեան դրուած տարբեր շրջաններ ներկայացնող հայկական թանկարժէք գորգերուն, որոնց հուշակը տարածուած է բոլորնայն աշխարհի մէջ:

### ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ (Մահուան Քառասունօրին Առիթով)

Ուրբաթ, 3 Հոկտեմբեր 2014ին, յիշատակի համազարուած թաղին երեկոյ մը տեղի ունեցաւ նուիրուած բազմավաստակ մանկավարժ եւ հասարակական գործիչ Երուանդ Պապայեանի, իր մահուան քառասունօրին առթիւ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի կողմէ կազմակերպուած սոյն միջոցառումին կը նախագահէր Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, ներկայ էին նաեւ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, հայ համայնքի քաղաքական, մշակութային, կրթական եւ հասարակական տարբեր կազմակերպութեանց ղեկավարներ, հայրենակցական միութիւններու եւ հայ մամուլի ներկայացուցիչներ, նախկին սաներ եւ ընտանիքի անդամներ, աւելի քան 300 հոգի:

Հանդիսավար Լեւոն Քէշիշեանի բարի գալուստի եւ ողջոյնի խօսքէն ետք յաջորդաբար ելոյթ

ուրեցաւ Դոկտ. Սիլվա Գարայեան, Տօքթ. Արշակ Գազանճեան, Պրն. Փայլակ Ահարոնեան եւ Տօքթ. Գրիգոր Ատանալեան: Անոնք իրենց ելոյթներով բարձր գնահատեցին վաստակաշատ ու նուիրեալ դաստիարակ եւ հասարակական բեղուն գործիչ Երուանդ Պապայեանի այն մեծ ներուժը որ ունէր եւ ի սպաս դրաւ հայ դպրոցին, մշակոյթին ու հայրենիքի ծառայութեան վսեմ գործին:

Գեղարուեստական բաժինին մէջ ելոյթ ունեցան Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Բրեւնթա Եկեղեցւոյ «Երուանդ Պապայեան» շաբաթօրեայ դպրոցի սաները:

Փակման խօսքը կատարեց Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան: Ան ի մէջ այլոց ըսաւ «Մեծ է այն մարդը որ կը մնայ իր կոչումին նախանձախնդիր: Ե. Պապայեան պատուական հայրդի մըն էր եւ տիպար հայ ուսուցիչ: Ան

### ԴԺԳՈՐՈՒԹԻՒՆ ԹԵՐՈՒՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՐՈՒԿ

#### ԲԱՑ ՆԱՄԱԿ

Իրանի հայ համայնքին, շ.Ն. Սփիւոֆի նախարարութեան, Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնարարութեան, Թեմակալի հայոց թեմի Թեմակալի խորհրդին, 2013 թուականի Մարտ ամսուայ վերջին օրերին, Թեմակալի հայոց թեմի Թեմակալի խորհուրդը Հայոց Մեծ Եղեռնի 100-ամեակը նշելու համար կեանքի կոչեց յատուկ յանձնարարութիւն, որը ցաօփ կուսակցական ցուցումներով եւ իր մէջ չէր ներառում համայնքում աշխատող, հասարակական, մշակութային ու բաղադրական բոլոր կողմերին ու մտքի տէր անձանց, ինչը, ինքնաբերաբար, անընդունելի էր եւ բողոքի տեղիք տուող:

Մենք՝ ներքոյ ստորագրեալ կառույցներս, հաւատում ենք, որ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը այն անկրկնադարձային միակերպ առիթն է, որ հայ ժողովրդի բեկորները ամենուրէք, անկախ իրենց գաղափարական կամ քաղաքական տարբերութիւններից կարող են յանուն ազգային գերագոյն իրաւունքների եւ շահերի միատեղել իրենց բոլոր ուժերը, յանուն հայ ժողովրդի ոտնահարուած իրաւունքների վերականգնման:

Այս համոզումով եւ յանուն սրբազան ու վեհ նպատակի իրագործման, որը կարող եւ անհրաժեշտ էր ստուերի տակ առնել ամէն տեսակի հատուածական ճղճիմ խաղերը, երկխօսութեան մէջ մտանք թեհրանի հայոց թեմի Թեմակալի խորհրդի հետ՝ կատարուած սխալը շտկելու պահանջով:

Թէեւ արդար մտածումն ու պարզ բանականութիւնը կարող էր համայնքի բոլոր ուժերը միատեղել, սակայն անհերքելի փաստ է, որ Թեմակալն, իր կամքից անկախ, չի կարողանում որդեգրել ազգային ուղղութիւն, ենթակալ մնալով ծանօթ աշխարհէ վուսակցութեան, ինչը, բնականաբար, անընդունելի է մեզ համար:

Ուստի, ներքոյ ստորագրեալ-

ներս նախապատրաստուած ենք կեանքի կոչել 100-ամեակը նշող անկախ եւ ժողովրդավարական հենքով ձեւաւորուած յանձնարարութեամբ, որի դռները բաց են լինելու ցանկացած հայրդու դիմաց:

Մենք չենք միտում հակադրել Թեմակալի խորհրդի կողմից կեանքի կոչուած «յանձնարարութեան» եւ նոյնիսկ ողջունում ենք նրա ամենափոքր դրական քայլն անգամ, ու նաեւ յոյս ունենք, որ Թ.Հ.Թ. Թեմակալի խորհուրդը համազգային եւ համայնքային հարցերում, այսուհետեւ, ունակ կը լինի անաչառ մօտեցում ցուցաբերել: Սակայն նոյն ժամանակ չենք կարող անտարբեր լինել համայնքում տիրող մենատիրութեան նկատմամբ, որը ջլատելով հայութեան միասնականութիւնը ներքնապէս թուլացնում է Հայկական ճակատը ցանկացած հակառակորդի դէմ առճակատման գործում:

Հ.Մ.Մ. «Ռաֆֆի» համայնքի  
Իրանահայ Ազգային եւ  
Մշակութային Միութիւն  
Աշխարհատեսների Հայկական  
Կեմտրոն - Նարմաֆ  
Աշխարհատեսների Հայկական  
Կեմտրոն - Մաջիդիէ  
«Իրանահայեր» լրատու ցանց  
«Արաբս» շաբաթաթերթ

անկրկնելի այն ոգեղէն մարդն էր, որ իր բովանդակ կեանքը դարձուց խունկ ու աղօթք հայ պատանիին համար: Երուանդ Պապայեանի անունը արձանագրուած պիտի մնայ անմահներու մատենին մէջ»:

Այս առթիւ Յովնան Սրբազան կարդաց Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ. Կաթողիկոսի օրհնութեան գիրը ուղղուած Երուանդ Պապայեանի հարազատներուն, որուն մէջ իր ցաւակցութիւնները կը յայտնէր մեծ կորուստին համար: Այնուհետեւ տեղի ունեցաւ հոգեհանգիստ հանդիսապատկեմամբ Առաջնորդ Սրբազան հօր եւ մասնակցութեամբ նախկին առաջնորդ Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեանի ու քահանայ հայրերու:

Արարողութեան աւարտին ներկաները փոխադրուեցան եկեղեցւոյ կից Գալայճեան սրահը, ուր տեղի ունեցաւ հոգեճաշի մատու-

ցում:  
Ընթրիքի ընթացքին տեղի ունեցաւ Երուանդ Պապայեանի կեանքի տարբեր հանգրուաններն արտացոլող սահիկներու ցուցադրութիւն:

Վերջին խօսք առնողն եղաւ Արեւմտեան Թեմի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, նկարագրելով իր առաջին հանդիպումը Երուանդ Պապայեանի հետ, միաժամանակ բարձր գնահատելով երախտաշատ նուիրեալ հայուն ազգապահպանման ի խնդիր տարած մեծ գործը:

Սոյն յիշարժան միջոցառման աւարտին ներկաները իրենց ցաւակցութիւններն ու մխիթարական խօսքերը փոխանցեցին հանգուցեալի այրիին՝ Տիկին Ռոզին եւ ընտանեկան համայն պարագաներուն:

«Յիշատակն արդարոցն օրհնութեամբ եղիցի»:

### ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ, ԵՐԱԽՏԱՇԱՏ ՀԱՅԸ

Շարունակուած էջ 1-էն

Է մնացած հայ ժողովուրդի ծառայութեան դիրքերու վրայ, սփիւոֆահայ իրականութեան, ներս: Ծառայութիւն մը՝ որ յետ մահու, իրմէ ժառանգուած մշտանորոգ պատ-

գամ որպէս, պիտի գործէ հայ մոր սերունդներու պատրաստութեան երկար եւ դժուարին ցանապարհին: Այդ էր եղած իր կեանքի կոչումը իր ողջութեան, այդ պիտի ըլլայ կոչումը յետ մահու:

Այս է արժանիքը մեծերու:

ՄԱՍԻՍ  
ԱՍԵՆԱԿԱՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

### ՎԱՏ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԼԱՒ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԼԱՒ Է

ՍԱՄՈՒՒՆԷԼ ԿՈՍԵԱՆ

Չնայած ուկրաինական հակամարտող կողմերի՝ Մինսկում կնքած հաշտության պայմանագրին, նրանց անվտանգությունը գրոշից չի բարձրանում, քանի որ իրավիճակն անելի Արևմտա-Ռուսաստանի լուրջ փոփոխություններ են առաջացրել։ Ռուսաստանի համար մահացու է իր կայսերապաշտական քարտեզի պատկերն առանց Ուկրաինայի, Արևմուտքն էլ վերջապես Ռուսաստանին պատժելու հիմնադրույթն առիթը գտաւ։ Դժուար է գուշակել այս ամենի աշխարհաքաղաքական հետևանքները, սակայն արդէն յայտնի է, որ անկախ գլոբալ մրցակիցների պարտություններից ու յաղթանակներից, պարտուողը Ուկրաինան է լինելու եւ՝ է։ Պարզապէս անհաւատալի է, թէ երբեմնի շէն այս երկիրն ինչպէս է կարողանալու թեքուած մէջքը ուղղել, ինչպէս է փոխադարձ ատելութիւնից ազատելու սեփական ժողովրդին։ ՄԱԿ-ի վերջին տեղեկատուութեամբ՝ Ապրիլից մինչ այսօր Ուկրաինայում 3000-ից ավելի մարդ է զոհուել, այդ թւում՝ մեծաթիւ խաղաղ բնակիչներ, 6000-ը տարբեր աստիճանի վնասուածքներ են ստացել։ Սեփական ժողովրդի դէմ ուժի կիրառումը ոչ մի անգամ բարի հանգրուանի չի հասցրել, ավելին, անորոշ ժամանակով ոչնչացրել է կողմերի միջեւ խաղաղութեան եւ համաձայնութեան կամուրջները։ Ուկրաինայի նախագահ Պորոշենկոյի առաջարկած՝ Ուկրաինայի արեւելքի ինքնավարութիւնն ընդարձակելու մասին օրէնքի նախագիծն ընդամենը հրադարձար պահանջներու ուղղացած քայլ է։ Նոյն նախագիծը կարելի էր ավելի շուտ կեանքի կոչել, ավելի շուտ երկխօսութեան մէջ մտնել սեփական երկրի բնակիչների հետ, որով եւ հնարաւոր կը լինէր փրկել երկիրը կազմալուծող ցնցումներից ու խորացող ճգնաժամից։ Սակայն Մայրաքաղաքի վրայ իշխանութեան եկածներն, ըստ երեւոյթին, ավելի քաղաքական բուտաֆորիա են կամ, որ ավելի իրական է, քաղաքական խամաճիկներ, որոնց թելերը Արեւմուտքի եւ Ռուսաստանի ձեռքերում են։ Արդիւնքում՝ Ռուսաստանը հասցրեց Ղրիմը սեփականաշնորհել, Արեւմուտքը՝ հակառուսական ամբողջ պահուստային ուրը շրջանառել։ Մինչդեռ Ուկրաինայում պատերազմը շարունակուած է, եւ անկանխատեսելի է դրա յետագայ ընթացքը։ Պորոշենկոն, ինք-

նահուչակ Դոնեցկի եւ Լուգանսկի հանրապետութիւններին յատուկ կարգավիճակ շնորհելու յայտարարութեանը զուգահեռ, միաժամանակ հասկացրել է, որ խօսքը նրանց անկախութեան կամ դաշնութիւն ստեղծելու մասին չէ։ Սակայն եթէ ամենակարգուած յատուկ կարգավիճակը առաւելագոյն էր, որին ձգտում էր ռուսամէտ բնակչութիւնը, ապա այժմ ինքնահուշակ այս հանրապետութիւններն Ուկրաինայից անկախանալու հարցն են պնդում՝ իրենց վարչական տարածքների սահմաններում։ Եւ նորից երկխօսութեամբ ինդիքը հարթելու ոչ մի նախաձեռնութիւն ու ցանկութիւն։ Ինչպէս յայտարարել է Գերագոյն ռազայի նախագահ Ալեքսանդր Տուրչինովը, եթէ Ուկրաինայի արեւելքում խաղաղ պայմարտութեան լուծման միակ տարբերակը կը լինի ռազմական դրութեան սահմանում։ Տուրչինովը նշել է նաեւ, որ Ուկրաինային անհրաժեշտ է վերախմբաւորել եւ ամրապնդել զինուած ուժերը, փոխել քաղաքների ազատագրման մարտավարութիւնը։ Այնպէս որ, առայժմ դժուար է ակնկալել, որ կողմերն ի վիճակի են բարի կամք դրսեւորելով փոխդիմումների գնալ եւ խուսափել յետագայ արիւնահեղութիւններից։ Սեփական ժողովրդի դէմ ռազմական ուժի կիրառումը շարունակուած է Կիւեւի իշխանութեան՝ հակամարտութեան լուծման ռազմավարութիւնը մնալ։ Տնտեսական, ռազմական եւ քաղաքական առաւել ռիսկային մարտահրաւերները առջեւում են։ Արեւմուտք-Ռուսաստանի յարաբերութիւնների հետեւանքով ճգնաժամը օրէցօր նոր սահմաններ է ընդգրկում՝ այլ տարածաշրջանների կայունութեանը եւս վտանգելով։ Ուկրաինական իրադարձութիւններով պիտի պայմանաւորել նաեւ Թուրքիայի անբնական աշխուժութիւնն ու ազերիների վերջին օրերի սահմանային միջադէպերը։ Աշխարհն անսպասելիօրէն յայտնուել է փոխադարձ մեղադրանքների, բամբասանքների ու անվտանգութեան սարդոստայնում, ինչն էլ խանգարում է հակամարտութեան իրատեսական լուծմանը։ Ոչ մէկը չի ուզում գիշել, առաւել եւս Ամերիկան ու Ռուսաստանը, որոնցից իւրաքանչիւրն իր ճշմարտութիւնն է պաշտպանում, ինչը բացարձակ աղերս չունի Ուկրաինայի ներկայ

Շաբ.ը էջ 19

### ԿՐՕՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

ՀԱՄԱՐԱԶՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ


Իսլամները Մուհամետ մարգարէին հետեւորդներն են եւ իսլամ կրօնքը աշխարհի երկրորդ մեծ կրօնքն է Քրիստոնէութենէն ետք։ Մուհամետի քարոզութեան շրջանը եղած է 610թ. սկսեալ մինչեւ իր մահը 632թ., երբ ինք եղած է իսլամներու կրօնական եւ քաղաքական պետը. անոր մահէն ետք, Ապու Պաքըրը, Օմարը, Օսմանը եւ Ալիին եղած են իսլամներու խալիֆաները, որոնցմէ վերջին երեքը սպաննուած են իրենց իշխանութեան օրօք։ Իսլամները մօտաւորապէս աշխարհի բնակչութեան 23% կը կազմեն եւ անոնց մեծ մասը Սուննի է (85-90%) իսկ մնացածը Շիի։ Սուննիները առաջին երեք խալիֆաներու հետեւորդներն են, իսկ Շիիները չորրորդին՝ Ալիին։ Շիաները մինչեւ այսօր կը պնդեն թէ խալիֆաները պէտք է որ Մուհամետի ընտանիքէն եւ տոհմէն ըլլան։ Ալիին, Մուհամետին զարմիկն էր եւ հարկ էր, ըստ Շիիներուն, որ Մուհամետի մահէն ետք ան ըլլար խալիֆան, սակայն ուրիշներ ընտրուեցան եւ բաժանուած ու վէճը (Սուննի եւ Շիի) սկսան այն ժամանակէն եւ կը շարունակուին մինչեւ այսօր։ Սուննիները եւ Շիիները շատ ճիւղաւորումներ ունին։ Սուննիները բաժնուած են չորս գլխաւոր ճիւղերու՝ Հանաֆի, Մալիքի, Շաֆիի եւ Հանալի։ Անոնցմէ ծագած են ուրիշներ, որոնցմէ ամենամեծը (Ուսապիները) են արմատականներ եւ ծայրայեղներ։ Մշուտական Արաբիոյ մէջ մեծամասնութեամբ, սուննի Ուսապիներ են, Եգիպտոսի եւ Սուրիայի մէջ Հանաֆի, Թուրքիայի, Լիպիոյ եւ Մարոքի մէջ Մալիքի, Եմէնի մէջ Շաֆիի, եւայլն։ Ամենամեծ թիւով բնակչութիւն ունեցող ոչ արաբ իսլամ երկիրը Ինտոնեզիան է (235 միլիոն), անոնք ալ Շաֆիի են։ Շիիներու ամենամեծ մասը Իմամի-ճաֆարիները են, որոնք 12 Իմամներուն կը հետեւին որոնց գլխաւորը Ալի պըն Ապի Թալեպն է ապա իր երկու զաւակները, թող եւ անոր սերունդը հասնելով մինչեւ տասներկորդ Իմամը, որ կը կոչուի Իմամ էլ-Մահաբի (բացակայ Իմամը) որուն գալուստին կը սպասեն տակաւին։ Շիի են նաեւ արաբները, գէյտիները, իսլամալիները եւ ուրիշներ։ Պարսկաստանը ամենամեծ (Իմամի Շիի) երկիրն է, իսկ Իրաքը երկրորդը, կան նաեւ Լիբանանի

հարաւային մասի մէջ, Պահլէսի մէջ եւ այլուր։ Սուրիոյ եւ Թուրքիոյ իսլամները մաս մը ալաու են (ներառեալ իսլամացած հայերը), գէյտիներ կան Եմէնի մէջ. Իսլամալիները տարածուած են աշխարհի մէջ եւ անոնցմէն ծագած են նաեւ սուրբիները։ Արաբ Շիիներու ամենամեծ խմբաւորումը կը գտնուի Իրաքի մէջ, ուր կը գտնուի նաեւ Ալիի գերեզմանը, Նաճաֆ քաղաքին մէջ, եւ իր որդիին Հիւսէյնի գերեզմանը Քարպալայի մէջ, երկուքն ալ ոսկիէ գմբէթներ ունեցող մզկիթներու մէջ։ Իսլամութիւնը տարածուած է սուրի եւ Թուրքի միջոցաւ։ (Ճիշատ) կրօնական պատերազմ է իսլամութիւնը տարածելու նպատակով, որու ընթացքին սպանուողները նահատակներ կը համարուին եւ արքայութեան կ'արժանանան. անոնք գեղեցիկ կոյսերով կը պարգեւատրուին դրախտի մէջ, ուր կան նաեւ միրգեր եւ գինիի գետեր։ Այդ պատերազմին յաղթանակ տանողները իրենց գրաւած երկիրներու հարստութենէն բաժին կ'ունենան, գանձ, դրամ, ոսկի, կանաչք, պատանիներ, կենդանիներ, հող եւայլն)։ Ոչ իսլամները, ի միջի այլոց Քրիստոնեաները եւ Հրեաները, անհաւատ են (քաֆեր), եւ անոնց ունեցուածքը հալալ է իսլամներուն։ (Ճիշատ) կոչը միայն իսլամներու խալիֆան կրնայ ընել։ Երբ երկիր մը կը գրաւուի (Ճիշատ)ի պատերազմի միջոցաւ, այնտեղ կը գործադրուի իսլամական օրէնքները, (Շարիի)ն, որ կ'ընդգրկէ իսլամներու սուրբ գիրքը (Քուրան)ը նաեւ ( Ահալիթ) կոչուած գիրքերը որոնք կը պարունակեն Մուհամետի խօսքերը, գործերը, եւ անոր մասին ամէն ինչ. բոլորն ալ բերնէ բերան փոխանցուած են եւ Մուհամետի մահէն ետք գրի առնուած։ Գրաւուած երկիրներու քաղաքացիները պէտք է կամ կրօնափոխ ըլլան ու իսլամութիւնը ընդունին, կամ իրենց կրօնքը պահելու համար (ձըգիէ) սուրբ վճարեն կամ ալ երկիրը լքեն, այլապէս սուրէ կ'անցնուին։ Արաբները իսլամութիւնը տարածեցին այս կերպով եւ Իրաքը իլեցին գրադաշդ Պարսիկներէն, Սիրիան եւ Պաղեստինը բիւզանդացի Քրիստոնեաներէն, Եգիպտոսը Ղպտի Քրիստոնեաներէն, Ալճիրիան Պերպեր

Շաբ.ը էջ 20

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909




**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p>
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability

- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning


- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B



**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

*Coverage & Protection should be on the top of your priority list.*



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

# ՅՈՒՇԵՐ ԵՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԵՆ

## ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Հիւանի գիւղէն էր, գիւղի ծնունդին յատկանիշներով, Գերմանական վարժապետանոցէն շրջանաւարտ, գերմանական կարգապահութեամբ դաստիարակուած ամբողջ կեանք մը նուիրեց դաստիարակչական եւ մանկավարժական կեանքին եւ պատրաստեց սերունդներ, որոնցմէ շատեր այսօր նոյն պատնէշին վրայ սփիւռքի տարբեր աստիճան, մամուլի, կրթական գործին եւ գրականութեան կը ծառայեն: Իրեն պաշտօնակից եւ գործակից ունեցաւ Ասատուր Էլճանեան, Արմենակ Էլոյեան, Միհրան Նաճարեան, Միհրան Սէֆէրեան եւ Միհրան Աղազարեան:

Անուրանալի է որ ուսուցչական այս ընտրեալներու եւ իր հեղինակութեամբ ղեկավարուած կրթական օճախին մէջ Եղեռնէն վերապրած, հացի եւ ջուրի նման ուսման ծարաւ ունեցող առաջին, երկրորդ եւ երրորդ սերունդները հայրութեան կնիքով մկրտեց: Կոչումով ուսուցիչն էր ան եւ այդ պէս մնաց իր պաշտօնավարութեան մինչեւ վերջին տարիները, հակառակ յետոյ ստանձնած տնօրէնի հանգամանքին: Միշտ փնտռեց իր ուսուցիչ պաշտօնակիցներուն մէջ իր նմանը եւ իր խմորը ունեցող անձը:

Ուսուցիչէն կ'ակնկալէր որ մաքուր տարագրով եւ փողկապով ներկայանայ աշակերտներուն: Ինք ալ այդ ձեւով կը հագուէր:


Չէր պահանջեր բաց կը թելադրէր դասաւանդման ուսուցչի տետրակը ունենալ: Ես մինչեւ օրս կը պահեմ իր հետ պաշտօնավարութեան շրջանէն ուսուցչական նախապատրաստական տետրակներս: Ըստ իր մանկավարժական մեթոտին, ու սուցիչին դասարան մտնելէն առաջ ամէն ինչ նախագծուած պէտք է ըլլար: Դասի պահանջքը եւ նոր դասաւանդութեան բացատրութիւնը: Հայերէն լեզուով աւանդուող նիւթերը, կրօն, բարոյագիտութիւն, գիտութիւն, աշխարհագրութիւն, հայոց պատմութիւն, քերականութիւն, խմորատիպ իր պատրաստութիւններն էին, որոնք տպագրական արուեստի զարգացման օրերուն խոցելի կը նկատուէին: Հայոց լեզուի դասագիրքը թանգարանն էր: Չայն նկատելով ամէնէն ընտիր հայերէնը եւ իր բնագիրներու ընտրութեամբ ջերմօրէն պաշտպանն էր արեւմտահայերէնին: Չէր հանդուրժեր հոլովական տարբերութիւնները:

Օր մը նախակրթարանի չորրորդ դասարանին անգիր սորվելու համար տուած էի Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն»ը:

Իր ներկայութեամբ լսելէ ետք քերթուածին արտասանութիւնը, հետեւեալ նկատողութիւնը կատարեց:

Թէ մօրդ անգամ մտքիցդ հանես

Քո մայր լեզուն չմոռանաս «Թէ մօրդ» հոլովը փոխեց «թէ մայրդ» հոլովի: Առարկեցի բնագրի այս փոփոխութեան համար: «Կրկնելով կը վարժուին այդ սխալ հոլովաձեւին», ըսաւ ան, արեւմտահայերէնի հանդէպ լեզուական նախանձախնդրութեամբ: Լիբանանահայ դպրոցներուն մէջ իր տնօրէնութեան օրերուն եւ Սահակեանով սկսաւ մարզահանդէսի դրութիւնը: Դասերէն չէր գոհեր մարզահանդէսի պատրաստութեան



համար: Առաւօտները աղօթքն էր 7:00-էն - 7:30 մարզանքի կը յատկացնէր: Բոլոր մարզանքներուն յղացումը իրն էր: Մարզանքները ուսուցանողը ինք կ'ըլլար եւ եթէ նոյնիսկ մարզանքի ուսուցիչ ունենար, ինք շատ կը միջամտէր, այն աստիճան, որ մարզանքի ուսուցիչը վիրավորուած կը զգար: Ժամկոչեանի ժամանակաշրջանին ապրողները լաւ կը յիշեն որ մարզահանդէսին աշակերտութիւնը կը բաժնուէր երկու խումբի, կարմիր եւ կապոյտ:

Ժողովուրդն ալ նոյն ձեւով, սակայն մեծամասնութիւնը կարմիրներու կողմը կ'ըլլար: Մարզահանդէսի խաղերու ցուցադրութեան բուրգերու եւ շրջանակաձեւ մարզանքի խաղերը գերծ կ'ըլլային կարմիր կապոյտ մրցակցութեան: Կուժերու պարը եւս կ'ընդունուէր բաւարարութեամբ: Բարձրագոյն դասարանի աշակերտուհիները ձեռքերնին կաւէ կուժ կ'երգէին «Համբարձում եայլա, եայլա ջան եայլա»: Մարզահանդէսը կ'եզրա-

փակուէր «Հայ ենք մենք, ուր որ ալ ըլլանք հայ ենք մենք» երգով: Ընդհանրապէս կարմիրները յաղթական դուրս կուգային մարզահանդէսէն: Յաջորդ օրը դպրոցը փակ կը մնար: Նոյն օրը եւ յաջորդող օրերուն աշակերտները իրարու դէմ լարուածութեամբ կը վերաբերէին: Բենիամին ժամկոչեան հակառակ որ ինքզինք անաչառցոյց կու տար, բաց տեղ մը կու գար, որ ինք ալ կարմիրներուն հետ կ'ըլլար, որովհետեւ հոգիով կարմիր էր:

Մարզահանդէսէն էտք Մայիս ամսուն կու գար «վարդահանդէս»ը: Այս ալ Սահակեանի յատուկ հանդէսներէն էր, որ վերջընթեր դասարանը աւարտական դասարանին կը նուիրէր:

Յայտագիրը բնութեան եւ կենդանական աշխարհին նուիրուած կ'ըլլար: Սրահը կը լեցուէր վարդերու բույրով: Ամէն Դեկտեմբերի վերջերը կը սպասուէր Սահակեանի տօնավաճառը: Կաթնակերպողը կ'ըլլար Մայրերու Միութիւնը վերին հսկողութեամբ Բենիամին ժամկոչեանի: Անշնան չէր ըլլար հասոյթը: Ուսուցչական կազմ եւ մայրերու միութիւնը կը լծուէին նուիրահաւաքի: Վաճառուող ուտեստեղէնները եւ յատուկ պատրաստուած ձեռագործները նուիրուած կըլլային ծնող ներու եւ դպրոցի բարեկամներուն կողմէ: Մասշօթը (լահմաձու), գնդիկները (միջուկով քօֆիթ), պանրածալը (սուպօրէկ) ամէնէն փնտռուած ճաշերն էին: Սահակեանի շահը փնտռողները իրարու միջեւ կը քրթմնջէին ոգելից ըմպելիքներու բացակայութեան մասին: Ժամկոչեան կը մնար անդրդուելի: Հակառակ անոր գաղտնաբար ալքով բերողներ կ'ըլլային, որոնք կը խմէին առանց տնօրէնի գիտակցութեան: Այս շրջագծին մէջ պատմեմ նաեւ հետեւեալը: Ս.Դ.Հ.Կ.-ի 10-րդ համագումարին առիթով Ամերիկայէն ժամանած էին Սեդրակ Շահէն եւ Մարտիրոս

Թարայեան: Ճաշի հիւրերն էին Բենիամին ժամկոչեանին: Ճաշարանը, նախկին Այնապի, ներկայիս Ֆաուար Անթիլիաս, մեր նստելէն քիչ ետք Խորէն Կաթողիկոսը իր հիւրերով նստաւ մեզմէ քանի մը սեղան անդին: Սեդրակ Շահէնը, որուն համար լիբանանեան օդին նախընտրած ոգելից խմիչքներէն էր, ջերմօրէն խնդրեց որ լիբանանեան օդին ապսպրուի սպասեակէն: Ես ալ տեղի տալով իր թախան ձան քին ապսպրեցի օդին: Ժամկոչեանն ու իր ընտանեկան պարագաներէն ոմանք ընդվզումով ընդունեցին այս ապսպրանքը եւ ժամկոչեան յարեց մինչեւ այսօր ոչ ոք համարձակած է խմիչք գործածել իմ սեղանիս շուրջ: Մինչ այդ Խորէն Կաթողիկոսը որ անցաւ մեր մօտէն յարեց - Ի՞նչ է Պրն. Ժամկոչեան քե՞ֆ կ'ընէք այդ բողբոջականեան ըսաւ ան:

Խորէն Կաթողիկոս իր հիւրերուն ապսպրեց ուխտի եւ գարեջուր: Խորէն Կաթողիկոս ուխտիով եւ գարեջուրով, իսկ մենք ալ օդիով պատուեցինք մեր հիւրերը: Ոգելից խմիչքի վերաբերեալ ուրիշ պատահար մըն ալ վերջիչեմ: Ուսուցչուհի մը ամուսնութեան առիթով ուսուցչական կազմով այցելութեան գացինք: Հիւրընկալը, ուսուցչուհիին ամուսինը խմիչքը սիրող էր, գիտնալով որ Բենիամին ժամկոչեանը իր գտնուած տեղը ոգելից խմիչք չէր ուզեր տեսնել, ան խմիչք գործածող այդ ուսուցիչները խոհանոց կանչեց եւ խմիչք հիւրասիրեց: Ժամկոչեան զգաց այս խաղը եւ լուրթիւն պահեց:

Յաջորդ օրը աշակերտութեան բարոյախօսութեան նիւթը դարձուց ոգելից խմիչքը եւ յուզումով եւ ցասումով յարեց - եթէ խմիչքի գաւաթը ես ալ ըլլամ ձեզի հրամցնողը, ձեռքէս առէք եւ գետին նետեցէք: Հարկաւ ակնարկու թիւնը աշակերտներէն աւելի ուսուցիչներ:

Շաբ.ը էջ 20



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻ  
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 15, 2014ԻՆ  
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8:00ԵՆ ՍԿՍԵԱԼ

DREAM PALACE-Ի ՀՔԵՂ ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀԻՆ ՄԷՋ  
510 E. Broadway Ave. Glendale CA. 91205

For More Info Call: (626) 422-9121 or (818) 590-9293 Սոււր՝ \$75

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ԼԵԶՈՒՆ

#### Գրաբար, Աշխարհաբար, թե Ա՛յլ Լեզու

ԴՈԿՏ. ԶԱԻՆԵ Ա. ՔԶՆԹ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

#### Մուտք

Հայաստաննայց եկեղեցւոյ բարեկարգութեան ինդըրին մէջ պաշտամունքի լեզուն դասական գրաբարէն դէպի աշխարհաբար թարգմանութիւն եղած է մնայուն հարց մը մօտ հարիւր տարիներէ ի վեր: Յաճախ թելադրուած է որ գրաբարը անհասկնալի ըլլալով հաւատացեալին չէր կրնար ծառայել որպէս հաղորդական միջոց Ս. Գիրքը եւ անոր վրայ հիմնուած ժամապաշտութիւնը հասկնալի դարձնելու: Հետեւաբար, անցեալին նոյնիսկ առաջարկեցին աղօթքներն ու շարականները թարգմանաբար պարզաբանել աշխարհաբարի օգտագործումով:

Հարցը սակայն շատ աւելի բարդ է: Այդ մասին նահատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Խորէն Ա. Մուրատբէկեան 1937 թուին «Զեկուցում» կրճատեալ անունին տակ Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան յատուկ ծաւալուն իրաւաբանութեամբ առաջադրած էր աղօթքներու, աւետարանական ընթերցումներու եւ արարողակարգերու մատուցման մէջ: Հարցը բարդ է որովհետեւ միայն թարգմանութեամբ պիտի չլուծուէին լեզուական եւ մեկնաբանական հարցերը, որոնք նոյնիսկ, ընդհակառակը, պիտի եղծէին բնագիրներուն իմաստն ու անոնց արտայայտած աստուածաբանութիւնը:

#### Բնագիրներու Ներքին Պահանջը

Եկեղեցական պաշտամունքային բնագիրներու պարագային մեր առջեւ պիտի ցցուին աստուածաբանական եզրերու եւ շարականներու յատուկ երաժշտութեան անկարելի թարգմանութիւնները: Սկիզբէն վճռապէս իմանալու ենք որ Հայ Եկեղեցւոյ շարականները անհպելի են քանի որ անոնց գրաբար լեզուին վրայ է որ երաժշտութիւնը հիմնուած է եւ անկարելի է երգել որեւէ շարական տարբեր լեզուով՝ սկսեալ աշխարհաբարէն: Եթէ փորձենք նոյնիսկ, պարզապէս այդ շարականները երգած չենք ըլլար, այլ միայն զանոնք հեգնանքի առարկայ դարձուցած կ'ըլլանք: Այդ մասին ոչ մէկ խօսք: Իսկ եթէ որպէս ուսուցման կերպ պիտի թարգմանենք զանոնք դասագիրքի ձեւով, այդ անշուշտ կարելի է եւ ուսանելի որպէս բնագիր միայն, եւ ոչ որպէս երգ: Դասապահները տարբեր են եւ պաշտամունքը տարբեր են հիմնովին:

Առաւել եւս անցնող դարուն գաղթաշխարհի պատկերը բոլորովին տարբեր նկարագիր ստացաւ, նոյնիսկ աշխարհաբարը սուրբգրական եւ արտասանելի աղօթքներու պարագային «անգործածելի» եղաւ, տեղական լեզուներու պարտադրանքին տակ: Չմոռնանք նաեւ որ աշխարհաբար լսող հաւատացեալը պէտք է նաեւ կարենայ հասկնալ աշխարհաբարը: Շատ լաւ գիտենք որ մեր ներկայ դարուն աշխարհաբարն այլ տեղական լեզուներու վերածելով է որ հասկնալի կը դառնան ընթերցումներն ու շարականները, եւ հետեւաբար գրաբարէն մեծ ուսուցման մը կատարելով, ի հարկին, անգլերէն կամ ֆրանսերէն լեզուներով մասամբ միայն կը կատարենք մեր պաշտամունքը:

#### Ս. Պատարագը՝ Գրաբար եւ Լրիւ Առանց Բացառութեան

Այս պարագան սակայն շատ զգալուն ըլլալով իր սահմանները պէտք է ունենայ: Մինչդեռ մէկ կողմէն անկարելի պէտք է ըլլայ Սուրբ Պատարագը գրաբարէն տարբեր որեւէ լեզուով կատարել, միւս կողմէ սակայն թարգմանուած եւ հրատարակուած բազմաթիւ պատարագամատուց գիրքեր պիտի ծառայեն ուսուցման միայն, եւ ո՛չ անոր կատարումին: Դասագիրքը տարբեր է այս պարագային Խորհրդաւարէնէն, որ սրբազան գիրքն է Ս. Պատարագի մատուցման: Արեւմտեան լեզուները հարկ եղած են օգտագործել որպէս միջոցներ եւ ոչ նպատակ, որպէսզի առանց եղծելու Հայ Եկեղեցւոյ իսկութիւնն ու նկարագիրը, յաջորդական սերունդներ գաղթաշխարհի մէջ չհեռանան իրենց մայրենի եկեղեցիէն:

Քահանաներ իրենց կոչումին վրայ հաստատ Ս. Պատարագը անպայման կատարելու են գրաբար բնագրով միայն եւ լրիւ արարողակարգով: Որքան ողբալի է երբ ոմանք կրճատելու միտքով զանց կ'անեն Ս. Պատարագի բացման «Խորհուրդ Խորին» հոգեգմայլ շարականը, կ'անտեսեն իրենց անձին հոգեւոր պատրաստութիւնը՝ լուսացումով եւ խոսովանանքով, զանց կ'անեն թափօրը, եւ հաւատացեալները կը զրկեն անձնական օրհնութիւն ստանալէ՝ խոնկով եւ խաչահամբոյրով: Կը տեսնենք եւ հիասթափ կ'ըլլանք երբ պատարագիչը, անպատրաստ, անապարանքով, ծածկեալ խորանի ետին պահուրտած, յանկարծ «Օրհնեա Տէր»ով երեւան կ'ելլէ: Իսկ անոնք որոնք Ս. Պատարագի աղօթքները մասամբ անգլերէն կ'արտասանեն կ'աղարտեն ամէն ինչ որ Հայ Եկեղեցւոյ յատուկ է:

#### Որքան Սեղադրելի է Կրճատման Այս Բնագիրը

«Կանուխ ժամերուն մարդ չի գար եկեղեցի այնպէս որ», կ'ըսեն անփոյթ քահանաներն ոմանք, «Օրհնեա՛ Տէր»էն կը սկսինք», ինքզինքնին կանոնին եւ օրհնքին տէրը կարծելով: Այդպէս մտածողներուն ըսելու ենք որ երբ չես կատարեր կանոնական կարգը, մարդիկ գիտնալով կանուխ չեն գար, կամ երբեք չեն գար, եւ դուն հոգեւոր դաստիարակութեանդ մէջ կը թերանաս եւ կը մնաս պատասխանատու անոնց ուշ գալուն: Ինչո՞ւ համար մի քանի եկեղեցիներ որոնք հաւատարիմ կերպով կը կատարեն մոռութի կանոնական կարգը եկեղեցւոյ մէջ ներկայ կ'ունենան նուազագոյնը մէկ քառուորդը հաւատացեալներուն: Մեղադրելի է երբ Պատարագի ընծաներու մատուցումը կը պատրաստուի վարագոյրի ետին մի քանի վայրկեաններու ընթացքին «անպատրաստ» քահանային կողմէ: Աստուածաբանական եւ պաշտամունքային խոր իմաստ ունի Ընծայից Պատրաստութիւնը: Քրիստոսի Մարդեղութեան խորհուրդն է որ փակեալ խորանով կ'ընծայաբերուի, եւ վարագոյրը երբ կը բացուի Քրիստոս կը յայտնուի եւ Ս. Խորանէն իջնելով Տիրոջ աշխարհ շրջիլը կը խորհրդանշէ: Ինչպէս զեղչել այս բոլորը եւ ինչ համարձակութեամբ զրկել հաւատացելոց իսկական ներ-

կայութիւնը որպէս եկեղեցի՝ Մարմինը Քրիստոսի:

#### Օրհնական Մատենաները

Գլխաւորաբար հինգ են անոնք. Աստուածաշունչ Մատենան, Ժամագիրք, Շարահնոց, Մաշտոց, եւ Ճաշոց: Իւրաքանչիւրը իր տեղը ունի օրական եւ տարեկան պաշտամունքի երկայնքին՝ ըստ բովանդակութեան: Աստուածաշունչն է որ կը քաղենք ամենօրեայ ընթերցումները՝ Հին եւ Նոր Կտակարաններէն, որոնց կը յաջորդէ Հաւատոյ Հանգանակը: Մաշտոցը եկեղեցւոյ Խորհուրդներու մատակարարման անձեռնմխելի գիրքն է: Քահանային առձեռն մատենան է ան որով կը կատարուէ Մկրտութեան, Դրոշմի, Պսակի եւ Հաղորդութեան եւ մնացեալ միւս բոլոր խորհուրդները, առաւել ննջեցեալներու Յուղարկանորութեան ու Թաղման Կարգը՝ դարձեալ ընդունուած գրաբար լեզուով: Հայ Եկեղեցին կը հաւատայ որ գրաբարով արտասանուած բանաձեւերը միայն վաւերական են ու ազդեցիկ: Ամէն պարագայի անփոխարինելի են գրաբար օրհնութիւններն ու բանաձեւերը որոնց անմիջապէս կրնայ յաջորդել թարգմանութեանց միջոցը՝ ատանալէ ետք գրաբարի վերջնական կնիքը:

Ժամագիրքը ամենէն գործածելին է օրական ժամապաշտութեան համար, իսկ Ճաշոցը մեծագոյն հատորն է Հայ Եկեղեցւոյ մէջ ուր կան Ս. Գրքի գրեթէ լրիւ բովանդակութիւնը, ըստ օրուան տօնին կամ չիշատակին, ինչպէս նաեւ արարողակարգերու ամբողջական միաւորները, ինչպէս Զրօրհնէքի, Խաչահանգիստի, Ոսնլուսչի, Խաղողօրհնէքի, Խաչվերացի Թափօրին եւ այլ կարգերու, հայ եւ ուղղափառ եկեղեցական հայրերու ընդարձակ աղօթքներով միասին: Ճաշոցը գրե-

թէ անգործածելի է այժմ, եւ սակայն եկեղեցիներ պրակներու վերածելով չիշեալ արարողակարգերը ըստ աւուր պատշաճի առձեռն կը գործածեն զանոնք, գրաբարով, աշխարհաբարով եւ տեղական այլ լեզուներով, միշտ նկատի ունենալով որ Պատարագամատուց գիրքը բացառութիւն կազմելով բոլորովին անկախ կը մնայ եւ տարբերակ չի կրնար հանդիսանալ այլալեզու գործածութեամբ:

#### Մեր Տեսլութիւնը

Հայ Եկեղեցին իր իսկութեանը մէջ հայկական հաստատութիւն մըն է, եւ եթէ աշխարհաբար լեզուն պիտի որդեգրենք որպէս օժանդակ եւ ոչ որպէս փոխարինող գրաբարին, բարեկարգութեան ոգին համաձայն քայլ մը առած կ'ըլլանք: Նոյն հասկացողութեամբ արեւմտեան երկիրներուն մէջ՝ Եւրոպա, Ամերիկաներ, Աւստրալիա, ուր անպայման գործածուելու են տեղական լեզուները որպէս ուսանելի միջոցներ, եւ ի հարկին որպէս գործադրելի՝ չատկապէս պսակադրութեան եւ անձնական աղօթքներու պարագաներուն: Հոս եւս շատ զգուշ ըլլալու ենք որ զանոնք իբր օրինակ չգործածենք Ս. Պատարագի բնագրին եւ մատուցման համար: Ս. Պատարագը հասարակաց Խորհուրդն է հաւատացեալներու միացեալ պաշտամունքին համար եւ ոչ անձնական, ինչպէս եւ Խորհուրդները: Պատարագամատուցը վեր է ամէն բանէ եւ հարկ անհրաժեշտ է անոր մատուցումը կատարել լրիւ աւանդական լեզուով եւ կերպով: Հաւատացեալներու պարտքը եւս անհրաժեշտ է, սերտել եւ յարատեւ մասնակցել արարողութեանց, եւ ոչ թէ առարկայական կեցուածք որդեգրել եւ զանգատիլ թէ բան չեն հասկնար կատարուածէն:



THE AMERICAN ARMENIAN ROSE FLOAT ASSOCIATION  
CORDIALLY INVITES YOU TO THE PREMIER OF  
"CRADLE OF CIVILIZATION"  
THE FIRST ARMENIAN ROSE PARADE FLOAT

at a celebratory  
*Gala*  
Under the Stars

SUNDAY, OCTOBER 19, 2014 • 5:00P.M.  
ROSE BOWL – COURT OF CHAMPIONS  
1001 ROSE BOWL DRIVE • PASADENA, CA

\$200 DONATION

INFORMATION & RESERVATIONS  
Margaret 626-798-4480 margaretmgr@gmail.com or Flora 323-681-8975



# Massis Weekly

Volume 34, No. 37

Saturday, October 11, 2014

## Sarkisian Accuses Allies of Failing to Support Armenia Over Karabakh

YEREVAN (RFE/RL) — President Serzh Sarkisian has accused ex-Soviet states aligned in the Russian-led Collective Security Treaty Organization (CSTO) of failing to support Armenia and even aiding Azerbaijan in the Nagorno-Karabakh conflict.

Sarkisian launched the unusually scathing attack at a meeting with Nikolay Bordyuzha, the CSTO's visiting secretary general, held late on Monday.

In a statement on the meeting, Sarkisian's press office said, "The president emphasized that the position of several CSTO partners, which is displayed on various international platforms on issues of fundamental interest to their allies and the Nagorno-Karabakh conflict in particular, does not correspond the overall spirit of the negotiation process, contradicts statements and proposals by the co-chairs of the OSCE Minsk Group as well as documents adopted within the CSTO framework."

"Ilham Aliyev's bellicose and Armenophobic statements do not receive an appropriate reaction from CSTO partners, which Serzh Sarkisian believes could have restrained the Azerbaijani leadership's adventurist ambitions," said the statement. "In the president's words, as a result, Azerbaijan continues to escalate the situation and take provocative actions, blatantly violating its commitment to

the conflict's peaceful resolution."

It was not clear whether Sarkisian referred only to Central Asian states affiliated with the defense pact or Russia as well.

The Armenian leader has already slammed the CSTO's Turkic member states like Kazakhstan and Kyrgyzstan in the past. In September 2013, for example, he publicly criticized their presidents for signing up to a declaration of Turkic states that called for a Karabakh settlement "within Azerbaijan's internationally recognized borders."

Kazakhstan, Kyrgyzstan well as another CSTO member, Tajikistan, had previously backed even more pro-Azerbaijani statements by the Organization of Islamic Cooperation (OIC). The grouping of more than 50 predominantly Muslim states has repeatedly condemned Armenian "aggression" against Azerbaijan.

Kazakh President Nursultan Nazarbayev underlined his country's close ties with Azerbaijan in May when he publicly set a pro-Azerbaijani condition for Armenia's accession to the Eurasian Economic Union (EEU).

Sarkisian's latest criticism of Armenia's nominal Central Asian allies — and possibly Russia as well — came just three days before an EEU summit in Minsk during which he is expected

Continued on page 3

## Unique Armenian Newspaper Discovered in Hoover Library

STANFORD — The microfilming staff at Hoover Institution on War, Revolution, and Peace recently came across an unmarked box of microfilm that presented them with difficulty: a copy of a newspaper from World War I published in the Armenian script. To help transliterate the title, the Hoover librarian turned to Behzad Allahyar, principal Middle East languages cataloger for Stanford University Libraries; he in turn sought help from Nora Avetyan, the librarian for Armenian and Persian at UCLA. With the help of those two colleagues, the Institute had enough information to identify and catalog this publication, as well as realizing that no other copies appear to be available. "We are proud that the Hoover Library has again added an item unique to its collection". Stated the Institute

in a press release.

The newspaper, entitled Zang, was produced by the Social Democrat Hunchakian Party, founded in Switzerland in 1887 by Armenians hoping to establish an independent Armenia free from the Ottoman Empire. (It also may have been the first socialist political party in the Ottoman Empire.)

Օրդ. Լորա Գուլուճեան, Դոկտ. Պերճուհի Քուլէեան, Դոկտ. Սիլվա Գարայեան, Դոկտ. Արմինէ Մովսիսեան, Օրդ. Եսաւին Ալիէյեւ Դոկտ. Էլի Անդրէասեան

#### ՀՐԱՉ ՍԵՓԵԹՃԵԱՆ

Իր տեսակին մէջ իւրօրինակ եւ չիշարժան երեկոյ մըն էր Չորեքշաբթի, Հոկտեմբեր 1-ի հանդիսութիւն-ընդունելութիւնը Փաստինայի Հ.Բ.Ը.Մ.-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի շրջափակէն ներս: Ծնողա-Օժանդակ Մարմինը հրաւիրած էր վարժարանի ծնողներն ու ուսուցչական կազմը, Հոգաբարձութիւնն ու կրթական Մարմինը, ինչպէս նաեւ տեղի Հ.Բ.Ը.Մ.-ի պատասխանատուները՝ Դոկտ. Արմինէ Մովսիսեանի տնօրէնութեան պաշտօնին նշանակուելուն առիթով : Ներկայ էին Դոկտ. Սիլվա Գարայեանը, Դոկտ. Պերճուհի Քուլէեանը, Պրն. Յակոբ Յակոբեանը, Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Սարգիս աւագ քահանայ ֆեթոյեանը, ինչպէս նաեւ Մովսիսեան ընտանիքի անդամներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Ծնողա-Օժանդակ Մարմինի համատեսնապետուհի Տիկ. Սեդա Մաթոսեան: Ան շնորհաւորեց Դոկտ. Մովսիսեանը եւ ընթացք տուաւ օրուան յայտագիրին: 11-րդ դասարանի աշակերտուհի էմըլի էքշեան դաշնամուրի վրայ ճարտարօրէն նուազեց Արամ Խաչատրեանի «Թոքաթա»ն: Շրջանաւարտներու միութեան ատենապետուհի, 2009-ի շրջանաւարտ Օրդ. Ռիթա Քէշիշեան փոխանցեց շրջանաւարտ աշակերտութեան սրտի խօսքը: Ան յիշեց մօտիկ անցեալի դպրոցական տարիները, ուր բախտը ունեցած էր աշակերտներու Օրդ. Արմինէ Մովսիսեանին, իրենց «Միսս էմ»ին: Մեղմանուչ չիշատակներով պարուրուած խօսքեր էին անոնք. թէ՛ յուզիչ եւ թէ՛ ոգեշնչող: Ապա, 12-րդ դասարանցի Մարալ Քիւրտեան քարացուց սրահը իր գմայլելի եւ հնչեղ ձայնով՝ «Մաղկած բայելի» եւ «Բարի արագիլ» մեներգներով, դաշնամուրի ընկերակցութեամբ ուսուցչուհի Օրդ. Էմմիրա Սիմոնեանի:

Արմինէ Մովսիսեանի երիտասարդ կենսագրութիւնը ներկայացնելու հրաւիրուեցաւ վարժարանի հայագիտական բաժնի բազմավաստակ պատասխանատու եւ Հայ Թարոն դասարանի ղեկավար Օրդ. Լորա Գուլուճեան: Մուսալեւցիի արմատներով Երեւան ծնած,

ընտանիքին հետ Լոս Անճելոս հաստատուած, Ալէք Փիլիպոս վարժարանէն, Քալիֆորնիոյ Ըրվայնի համալսարանէն (Պատմութիւն) եւ Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարանէն (Դոկտորականը կրթութեան գծով) շրջանաւարտ դատաւարու գրագահու, Դոկտ. Արմինէ Մովսիսեան վերջին ութ տարիներուն կը դասաւանդէր Մանուկեան վարժարանէն ներս որպէս պատմութեան ուսուցչուհի: Անոր մարդկային թէ՛ ազգային օրինակելի վարքը արդէն իսկ իր դրոշմը դրած է աշակերտութեան մէջ: Օրդ. Գուլուճեան փոխանցելէ ետք կենսագրական գիծերը, անդրադարձաւ Մովսիսեան անձին, գործընկերին եւ հայուն, ապա, շնորհաւորանքի եւ բարի երթի մաղթանքներով եզրափակեց իր խօսքը:

Շնորհաւորական սրտի խօսքով հանդէս եկաւ Հ.Բ.Ը.Մ.-ի կեդրոնական վարչական ժողովի փոխնախագահ եւ վարժարանի հոգաբարձութեան ատենապետ Պրն. Սինան Սինանեան: Ան շնորհաւորեց Դոկտ. Մովսիսեանի նշանակումը, վերջինիս մէջ տեսնելով նոր եւ աւելի մեծ ներուժ՝ շարունակելու դպրոցին յաջողութիւնները: Օգտուելով առիթէն, Պրն. Սինանեան բարձր գնահատեց Դոկտ. Պերճուհի Քուլէեանի, Դոկտ. Սիլվա Գարայեանի եւ Դոկտ. Մարի Սարգիսեանի երկար տարիներու նուիրելալ աշխատանքը եւ յայտարարեց վարժարանի Հոգաբարձութեան կազմին ու կրթական Մարմինի ատենապետուհիի պաշտօնին նշանակումը Դոկտ. Էլի Անդրէասեանի՝ նախկին փոխտնօրէնուհի Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի: Պրն. Սինանեան նշեց նաեւ ներկայութիւնը Հոգաբարձութեան երկրորդ նոր անդամի մը՝ Բարեգործականի Եագուպեան յայտնի ընտանիքի շառաւիղ Տօքթ. Սթիվ Եագուպեանի:

Հանդիսավարուհի Տիկնան Մաթոսեանի փակման խօսքէն ետք, Ծնողա-Օժանդակ Մարմինի համատեսնապետուհի Տիկ. Սիլվանա Վարդանեան ծաղկեփունջով մը պատուեց Դոկտ. Արմինէ Մովսիսեանը, որուն շնորհակալական հակիրճ խօսքով վերջ գտաւ հանդիսութիւնը: Ան խոստացաւ, որ դպրոցը պիտի շարունակէ իր

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ԽԱՐԲԵՐՂԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ



ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Ամերիկայի տարածքին, շատ հաճախաբար ամենին նորակազմ հայրենակցական միութիւնն է Լոս Անճելըսի խորհրդարանի մշակութային միութիւնը, որ անցեալ Մարտ 17ին, Կլենտէյլի մէջ Հրապարակային յատուկ հաղորդագրութեամբ մը ինքզինք ծանօթացուց մեր գաղութին եւ անոր միջոցով ալ՝ հայրենիքին եւ Սփիւռքին: Կրկնութեան գնով կարելի է յիշեցնել, թէ իր հաղորդագրութեան մէջ խորհրդարանի հիմնադիր վարչութիւնը յատկօրէն մեր հանրութեան բացառապէս էր իր ներկայութիւնը, միաժամանակ շեշտելով Սփիւռքի տարածքին մեծ, օրինակելի, օրհնաբեր ու բարեբար դերերը հայրենակցական մեր բոլոր միութիւններուն:

Հոն նաեւ բարի յիշուած էր, թէ «իրենց պապենական հողերէն եւ տուներէն վտարուած մեր ժողովուրդը, օտար երկրի տակ հագիւնինք ինքզինք գտած՝ անմիջապէս հայրենակիցներու հետ քով քովի գալով մտածած էր իր կարելի ընել բոլոր միջոցներով, կենսական ապրուստի եւ ուսման կարօտեալ իր միւս հայրենակիցներուն գործնականապէս օգնութեան ձեռք երկարելու»: Ճշգրիտ, օրինակելի եւ հպարտանք առթող երեւոյթ ու աշխատանք:

Ուստի, մեկնելով իր իսկ նշանաբանէն՝ Կիրակի, Սեպտեմբեր 14ին, երեկոյեան ժամը 6ին, միութեան հիմնադիր վարչութիւնը կազմակերպած էր իր յանձնառութեան ու աշխատանքներուն մասին գեկուցման ու ծանօթացման հրապարակային ձեռնարկ մը, Կլենտէյլի հանրային գրադարանի սրահին մէջ:

Վարչութեան կազմակերպած այս առաջին գեկուցական ձեռնարկին, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ՝ խորհրդարանի ծնողքի գաւակ Փօլ Գրիգորեանի եւ իր կնոջ կողքին, ներկայ էին նաեւ գաղութի մտաւորականներ, հայ մամուլի ներկայացուցիչներ եւ մանաւանդ շրջանիս հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներն ու աւելի քան հարիւր հայրենակիցներ եւ հիւրեր:

Օրուան հանդիսավար եւ վարչութեան փոխատենպետ Արա Ահարոնեան, որ ձեռնհասօրէն վարեց իր պաշտօնը, բարի գալուստի ու շնորհակալութեան իր խօսքին մէջ ներկայացուց ներկայ հիւրերը եւ ապա անդրադարձաւ 19րդ դարէն սկսեալ խորհրդարանի հայ գաղ-

թականներու Ամերիկա հաստատուելուն եւ մեր ազգային եւ եկեղեցական եռուզեւին մէջ անոնց բերած ներդրումին: «Հարիւրամեակ մը ամբողջ ամերիկահայութեան կենցաղին հետ առնչուելով՝ մեծ ու կարեւոր դեր խաղացած է խորհրդարանը, նոյնիսկ ամերիկեան քաղաքական կեանքէն ներս: Յիշենք նաեւ, որ տասնամեակներու ընթացքին, գրեթէ բոլոր հայահոծ գաղութներէն ներս կազմուած են Համախորհրդային հայրենակցական զանազան համախմբումներ: Այսպէս՝ Պոսթըն, Ֆրեզնօ ու Լոս Անճելըս: Ու մենք իբրեւ հիմնադիր վարչութիւն, այդ աւանդը արդիւնաւէտ գտանք 17 Մարտ, 2014ին, յաջողելով կազմել այսօրուան Ամերիկայի խորհրդարանի մշակութային միութիւնը, որուն նպատակն է մեր ժառանգը վառ պահել ու հպարտանքով գալն փոխանցել մեզ յաջորդող սերունդներուն», ըսաւ ան:

Պարզել էտք միութեան գլխաւոր կատարողները՝ Ահարոնեան յոյս յայտնեց, որ մօտիկ ապագային վարչութիւնը ծրագրէ եւ իրագործէ Հիւսիսային Ամերիկայի հայահոծ շրջաններէն ներս մասնաճիւղեր կազմելու աշխատանքը եւ ինչու չէ նաեւ՝ սեփական հաւաքովայնի մը տէր դառնալու կենսական երազը:

Ապա Ահարոնեան ներկայացուց օրուան առաջին գեկուցաբերը եւ խորհրդարանի ծնողներու ղեկավար Մէյրի Նաճարեանը, տալով անոր կենսագրական գիծերէն ամփոփ բաժին մը՝ միաժամանակ պարզելով անոր եւ ամուսնոյն՝ Բիլի Վարդգէս Նաճարեանի, տարիներէ ի վեր «Մետիքըլ Աութօրի» կազմակերպութեան միջոցով կատարած անսահման մարդասիրական օժանդակութիւնները, մեր հայրենիքի եւ Արցախի հայրենակիցներուն, որոնց համար Նաճարեան ամուլը արժանացած էր հայ եւ օտար պատասխանատու անձնաւորութիւններէ բարձր շքանշաններու:

Մէյրի Նաճարեան բեմ բարձրանալով՝ անգլերէնով ըսաւ, թէ ինք եւ իր ամուսինը ամիս մը առաջ դարձեալ յատուկ առաքելութեամբ Հայաստան եւ Արցախ այցելած էին ու առիթէն օգտուելով, ինք իբրեւ քարտուղարը նորաստեղծ Ամերիկայի խորհրդարանի միութեան, յատկապէս այցելած էր Երեւանէն քիչ մը անդին Արարատեան դաշտի Մասիսի շրջանը գտնուող Նոր խորհրդարանը: Աւանի մուտքին, ան նախ այցելած էր Մեծ Եղեռնի յիշատակին նուիր-

ուած խորհրդարանը գեղեցիկ յուշակոթողը, որ եղած էր գրեթէ առաջինը՝ ամբողջ խորհրդարանի Միութեան տարածքին: «Մեզի պատիւ եւ հպարտութիւն առթող այս յուշարձանը այս օրերուն կը գտնուի շատ անխնայ վիճակի մէջ: Չենք կրնար ձեռնառնել մնալ: Այս մէկը մեր հպարտութիւնն ալ է», ըսաւ ան ու աւելցուց, թէ յուշարձանը վերանորոգելու եւ անոր շրջափակը մաքրելու, լուսավորելու եւ վերջապէս գալն զբօսաշրջիկներու ներկայացնելու ծրագիր-աշխատանքը կը կարօտի շուրջ 15 հազար տոլարի:

Ապա, Նաճարեան ներկայացուց Նոր խորհրդարանի վերանորոգութեան ընթացքին իր այցելած երկրորդական վարժարանը, որ ունէր շուրջ վեց հարիւր երկսեռ աշակերտութիւն: «Ցաւով կ'ուզեմ ըսել, որ այս վարժարանը կը կարօտի անմիջական մեծ նորոգութիւններ: Այսպէս՝ լուսացարան, դասարաններ, դուռ, պատուհան, աստիճան եւ մանաւանդ կեդրոնական ջերմացման դրութիւն: Երեւակայեցէ՛ք, անցեալ ձմեռ, վարժարանի դասարանները այնքան ցուրտ եղած են, որ օրերով աշակերտներ եւ նոյնիսկ ուսուցիչներ բացակայած են»:

Նաճարեանի համաձայն՝ այս վարժարանէն ներս առաջնահերթ անհրաժեշտութիւնը վարժարանի կեդրոնական ջերմացման դրութիւնը հաստատելն է, որ կը կարօտի շուրջ 50,000 տոլարի: Այս առթիւ, ան կոչ ըրաւ ներկայներուն համախմբուելու եւ նիւթապէս նեցուկ կանգնելու վարչութեան, որ շուտով իրականացնէ այս մեծ եւ անհրաժեշտ ծրագիրը:

Ապա գեկուցաբերը իր «հիւմըր»ով նաեւ ներկայներուն ծանօթացուց Արցախէն եւ Հայաստանէն ներս իր եւ ամուսնոյն եւ յատկապէս «Մետիքըլ Աութօրի»-ի միջոցով մինչեւ հիմա կատարուած մարդասիրական եւ հայրենասիրական բազմաթիւ աշխատանքները: Յիշենք, որ ամբողջ գեկուցման ընթացքին բեմի պատասխան վրայ գուցադրուեցան Նաճարեանի մտահոգութիւններն ու ծրագիրները ապացուցող բոլոր նկարները:

Ապա, Ահարոնեան ներկայացուց օրուան երկրորդ գեկուցաբերը՝ խորհրդարանի ծնողներու գաւակ Կարպիս Տէր Եղիայեանը, որ «Մաշտոց» քոլեճի հիմնադիր նախագահն է: Հանդիսավարը նաեւ թուեց անոր բոլոր տիտղոսներն ու ստացած շքանշանները ու 1987էն մինչեւ օրս անոր կատարած բազմաթիւ ուխտագնացութիւնները դէպի պատմական Հայաստան, որմէ ետք անդրադարձաւ Ծոփաց աշխարհին, խորհրդարանի Եփրատ քոլեճին եւ թուեց անունները մեր այն մտաւորականներուն, որոնք զոհ գացած էին Մեծ Եղեռնին, ու շեշտեց կարեւորութիւնը՝ գիտակցօրէն տէր կանգնելու մեր ազգային պահանջատիրութեան, միշտ վերանորոգ ուխտով:

«Պատմական խորհրդարանը եւ իր ներկայ իրավիճակը» նիւթը ներկայացնելով՝ միութեան ատենապետ դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան ըսաւ. «Ծոփաց աշխարհ, խորհրդարանը կամ խորհուրդը եւ կամ էլ լազիկ, մաս կը կազմէ Արեւմտեան Հայաստանի վեց նահանգներուն եւ ունէր շուրջ 307 հազար բնակչութիւն, որուն 170 հազարը հայ էր: Նահանգը, որ մենք կը կոչենք «Ոսկեղէն դաշտ», ունեցած է 300 քաղաքներ եւ գիւղեր»:

Լուծեան ընթացքին փնտռած ու գտած էր իր պապենական տունը: «Խորհրդարանի պարկեզտ հայ է, մաքուր նկարագիրով, աշխատասիրութեամբ եւ փափկանկատութեամբ», շարունակեց գեկուցաբերը եւ խորհրդարանի այս տարուան նկարներով պատրաստուած տեսասլայդներու ցուցադրութեան միջոցին տուաւ սպառիչ բացատրութիւններ ու կատարեց տպաւորիչ մեկնաբանութիւններ:

Այսպէս, ներկայները տեսան խորհրդարանի նոր համալսարանի նկարը, այսօրուան տուններն ու փողոցները, հրապարակը, ժողովուրդը, «Եփրատ քոլեճ»ի ներկայ վիճակը, մշակութային պալատը, Մէյրիքի Ս. Յակոբ եւ Ս. Կարապետ եկեղեցիներէն մնացած պատերը, աւերակ խորանները, ապա Հիւսեմիկը, խորհրդարանի ուրարտական շրջանէն մնացած բերդը, Մէյրիքի Աւետարանական եկեղեցին, որ աղբայնոցի վերածուած է, շիրմաքարեր, հայկական տուններ, շուկաներ, քաղաքապետարանը եւ Շահին քալան, որ հայկական խորհրդարանն է:

Հետաքրքրականը այն է, որ դոկտ. Տէր Եղիայեան, երբ գտած է իր պապենական տունը, համոզած է հոն բնակող թուրքերուն, թէ տան դուռը շատ հին ըլլալով պէտք է որ փոխուէր: Սակայն գլխաւոր նպատակը եղած էր իր պապենական տան դրան բանալին ունենալ: Եւ յաջողած էր: Մեծ եւ յուզումնալից ծափահարութիւններու մէջ գեկուցաբերը ցոյց տուաւ իրեն հետ բերած այդ պատմական մեծ բանալին՝ իբրեւ միակ ժառանգը իր պապերէն:

Ապա, յաջորդաբար ցուցադրուեցան Բալուխի, Բրջենջի, Հաւալի, Մեսրոպ լեռան, Իջմէի, Չմշկածափի նկարները, հետաքրքրական ու պատմական տուեալներու եւ բացատրութիւններու ընկերակցութեամբ:

Իր բաժինի աւարտին, դոկտ. Եղիայեան շեշտեց, թէ «զբօսաշրջիկը օտար երկիր կ'երթայ պատեւով, մինչ ինք, իր կատարածը ուխտագնացութիւն է: Մեծ եւ յատուկ տարբերութիւն կայ երկուքին միջեւ»:

Ձեռնարկի փակման խօսքը կատարեց Լոս Անճելըսի քաղաքապետութեան խորհուրդի անդամ՝ խորհրդարանի ծնողքի գաւակ Փօլ Գրիգորեանը, որ նախ ցոյց տուաւ իր մեծ ծնողներէն իրեն ժառանգ մնացած Աւետարանը, որուն մէջ արձանագրուած էին իր ընտանիքի անդամներուն ծննդեան թուականները եւ որոշ պատմական տուեալներ: Ծնորհէր ալ այս Սուրբ Գիրքին, ան կրցաւ, ինքզինք ձանձնալ իբրեւ խորհրդարանի կամ աւելի ճիշդ՝ հիւսեմիկցիի գաւակ: Ապա ան յիշեց, թէ երբ վերջին անգամ Հայաստան այցելած էր, Ծիծեռնակաբերդի պատերուն վրայ հայերէն տառերով գրուած խորհրդարանի բաժինը մեծ հպարտութեամբ ցոյց տուած էր ամերիկացի իր գործակից ընկերակիցներուն: Այս առթիւ, միութեան ատենապետը առ ի երախտագիտութիւն, Փօլ Գրիգորեանին յանձնեց խորհրդարանի երկու պատմական նկարներ՝ իբրեւ յուշանուէր:

Յիշենք, որ ձեռնարկի գեղարուեստական բաժինին, ազգային երգերով իր սիրայօժար մասնակցութիւնը բերաւ ծանօթ երգիչ Նշան Զաղապալանեան: Իսկ սրահի մուտքին գետեղուած էր յատուկ



### ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԵՊՈՒ ԿԻԼԻԿԻԱ

Շարունակում է 13-ին

տաքին եւ թէ ներքին բոլոր պատերու վրայ կան հարիւրաւոր այլազան քանդակներ, յատկապէս սուրբգրային դէմքերու: Ադամ ու Եւա՝ կենաց ծառին քով: Դաւիթ եւ Գողիաթ: Դանիէլ մարգարէն առիւծներու գութին մէջ: Յովնան մարգարէն եւ կէտ ձուկը: Սամսոնը, որ իշու ծնօտով կը սպաննէ փղշտացին: Յիսուս իր մօր՝ Մարիամին հետ, եւ իր խաչելութիւնը: Յովհաննէս Մկրտիչը, Գրիգոր Լուսաւորիչը եւ թաղէտ առաքելը: Անշուշտ եկեղեցիի հիմնադիր՝ Գազիկ թագաւորին ալ քանդակը, որ բոլոր քանդակներուն (նոյնիսկ Յիսուսի) ամենէն մեծն է: Նաեւ, պատահաններուն վրայ որ թատուակի, նուռի եւ այլ ծառերու, բոյսերու եւ թռչուններու զարդանկարները:

Հիմա, պէտք է ըսել եւ ընդունիլ թէ՛ Սուրբ Խաչ եկեղեցիի ճարտարապետական կառուցը - ինչպէս նաեւ բոլոր դարերու բոլոր ճարտարապետական կառուցները - մէկ կողմէն ցոյց կու տան մարդարարածին ձեւերուն հրաշակերտ հետքերը: Իսկ միւս կողմէն ալ վանայ լիճը - ինչպէս նաեւ համայն ստեղծագործութիւնը - Երկիրը ու Երկիր, լեռներ ու ձորեր, ծով ու ցամաք - ցոյց կու տան Աստուծոյ հրաշագործ ձեւերուն հետքերը: Մինչ գիրար ամբողջացնող այս երկու հրաշալիքներուն համար Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելէ ետք կը պատրաստուինք դուրս ելլել, յանկարծ կը յիշեմ ուրիշ հետաքրքրական եւ զգայացունց դէպք մը որ պատահեցաւ ճիշդ հոս - Սուրբ Խաչ եկեղեցիին մէջ - երբ առաջին անգամ ըլլալով ուխտի եկած էինք Կիրակի 16 Սեպտեմբեր, 2007-ին խումբ մը հայաստանցիներու հետ:

Եկեղեցի մտնելէն առաջ, մեր խումբի շրջանին ծանօթ առաջնորդ՝ Վազգէն Գալճեանին կ'ըսեմ. պատշաճ է որ եկեղեցի մտնելէ ետք երգենք «Հայր Մեր» եւ «Տէր Ողորմեա» շարականները, բայց ան կը զգուշացնէ ըսելով թէ՛ հոն աղօթելը կամ շարական երգելը արգիւտած է (բայց ոչ այլեւս. Սեպտեմբեր 2010-ին եկեղեցիին վերանորոգուելէն եւ տեղի ունեցած օծումի պատարագէն ետք): Սակայն մենք եկեղեցի մտնելէ ետք կը սկսինք երգել բարձրաձայն եւ յուզումնաթաթախ հոգիով: Հազիւ կը սկսինք երգելու, եկեղեցիի դրան մուտքին կեցած երկու մարդ կը սկսին փափսալ իրարու եւ մերթ ընդ մերթ մեզի նայելով դուրս կ'ելլեն: Կ'երեւի թէ եկեղեցիին պահակներն էին:

Մինչ կը սկսինք երգելու, կը զգամ որ երկու երիտասարդ ետեւի կողմէն լուռ ու մուռ կը հետեւին մեր երգեցողութեան: Անշուշտ վախ մը կը պատէ գիւս, խորհելով որ անոնք կրնային եկեղեցիի պահակները ըլլալ, ետեւի դուռէն ներս մտնելով, կը սպասեն որ երգեցողութիւնը վերջացնելէ ետք լաւ դաս մը տան ինծի, որովհետեւ երգեցողութիւնը ես կ'առաջնորդէի: Ուրեմն հազիւ երգեցողութիւնը վերջացուցած, կը դառնամ իրենց եւ կը հարցնեմ թէ ո՞վ են, ի՞նչ կ'ուզեն (անշուշտ թրքերէն լեզուով):

Ոչ միայն վախս լման կը փարատի, այլ մեծապէս կ'ուրախանամ երբ անոնք կ'ըսեն թէ՛ իրենք

արձակուրդի մէջ եղող Մէրաին քաղաքէն քրիստոնեայ գինուորներ են - բնականաբար թրքական բանակի - եւ եկած են այցելելու հայոց այս նշանաւոր եկեղեցին: Եւ թէ՛ իրենք ալ լսած էին որ անոր մէջ աղօթելը եւ երգելը արգիւտած է: Եւ ապա ցոյց տալով իրենց սոթթած թեւերը կ'ըսեն՝

- Եթէ երբեք ուէ մէկը ձեզի արգելք հանդիսանար կամ դուրս դնէր, մենք իր քիթն ու բերանը պիտի ճզմէինք, որովհետեւ մենք գիտցանք որ դուք հայեր էք, եւ թէ այս եկեղեցին հայկական է:

Բայց միեւնոյն ատեն - եւ ասկէ շատ աւելի - մեր ուշադրութիւնը կը գրաւէ եւ մեզ շատ կը զարմացնէ եկեղեցիին սրահի արեւմտեան կողմը գտնուող խումբ մը օտար ուխտաւորներ, որոնք ոչ միայն լուռ եւ ակնածանքով մտիկ կ'ընեն մեզի, այլ նաեւ արցունք կը հոսի իրենց աչքերէն: Եւ երբ կը մօտենամ իրենց եւ կը հարցնեմ՝

- Ներողութիւն, ո՞վ էք դուք եւ ինչու՞ կու լաք: Անոնցմէ մէկը կը պատասխանէ՝

- Դուք էիք պատճառը մեր

լացին, որովհետեւ դուք ալ կու լաքիք մինչ կ'երգէիք (որուն մենք գիտակից չէինք անշուշտ):

Եւ երբ իրենց կ'ըսեմ որ մենք հայեր ենք եւ իրենց կու տամ եկեղեցիին հակիրճ պատմութիւնը, հետեւաբար պատճառը մեր լալուն, անոնցմէ մէկը կ'ըսէ՝

- Մենք Հոլանտացի հաւատացեալ ուխտաւորներ ենք, եւ երբ տեսանք որ դուք արտասուախառն աչքերով կ'երգէք, ըսինք ասոնք անպայման հայեր ըլլալու են, որովհետեւ մեր համալսարան ուսանած ատեն, մենք արդէն ծանօթացած էինք ասոր հայ եկեղեցի մը ըլլալու իրողութեան եւ անոր տիտուր պատմութեան: Բայց դժբախտաբար, մեր խումբին թուրք առաջնորդը մեզի կ'ըսէ թէ այս եկեղեցիին ժամանակին յունական եկեղեցի մը եղած է: Անշուշտ մենք չուզեցինք իր հետ վիճաբանիլ, կը շարունակէ ան, ինչ որ օգուտ մը պիտի չունենար: Ապա կը վերջացնէ իր խօսքը՝

- Թէեւ եկեղեցիին պատմութեան այս շարամիտ աղաւաղումը մեզի մեծ ցաւ պատճառեց, բայց այս երբեք չսպասուած, անակնկալ հանդիպումը ձեզի՝ որպէս հայեր, եւ ձեզի սրտակից եւ ցաւակից ըլլալը մանաւանդ, մեզ մեծապէս

ուրախացուց: Անշուշտ մենք ալ իրենց սրտանց շնորհակալութիւն կը յայտնենք եւ կը բաժնուինք:

- Ով թուրք, մինչեւ ե՞րբ, մինչեւ ե՞րբ պիտի աղաւաղես պատմութիւնը - խաբես ինքզինքդ եւ ջանաս խաբել արար աշխարհը: Բայց, ափսոս որ, հազար ափսոս, որ երբեմն խաբուողը աւելի ցաւալի վիճակ կը ներկայացնէ, արգահատելի եւ մեղադրելի, քան խաբողը ինքնին: Գալիֆորնիացի հոգեբան Լեոն ձրոնագեան, իրաւամբ ըսած է. «Եթէ կ'ուզես բան մը ընել, անպայման կերպ մը կը գտնես: Եթէ չես ուզեր, չբեղանք մը կը գտնես»: Ասոր վրայ պէտք է նաեւ աւելցնել, ոչ միայն մէկ, այլ հարիւր մէկ չբեղանք. Մանաւանդ երբ հարցը կը վերաբերի թուրք պետութեան կողմէ Հայոց Յեղապանութեան ճանաչումի ուրացման: Է, Allah kurusun - Աստուած օգնէ - որ կը կարդանք ճիշդ տեղին, թուրքերու բազմաթիւ ինքնաշարժներու ետեւի դուրսի ապակիին վրայ:

- Ախ, թամար, ախ... յուսամ այս բոլորը լսեցիր: Յետեւութիւն...

Աղթամարէն կը վերադառնանք վան, ուր ծովափնեայ ճաշարանի մը մէջ ընթրելէ ետք կ'երթանք պանդոկ:

ARARAT-ESKIJIAN MUSEUM  
AND  
THE ARMENIAN STUDIES PROGRAM AT CALIFORNIA STATE UNIVERSITY, NORTHRIDGE

Present a Conference on

## ARMENIAN ART AND CULTURE IN THE OTTOMAN EMPIRE BEFORE 1915

Saturday, October 18, 2014  
Ararat-Eskijian Museum, Sheen Chapel  
15105 Mission Hills Road, Mission Hills, CA 91345

Co-Sponsored by:  
AGBU-ASBED  
Armenian Jewelers Association  
Hamazkayin Armenian Educational and Cultural Society  
National Association for Armenian Studies and Research (NAASR)  
Nor Serount Cultural Association  
Organization of Istanbul Armenians  
Tekeyan Cultural Association  
United Armenian Council of Los Angeles for the Commemoration of the Armenian Genocide

**Morning Session (9:45AM-12:30PM)**

*\*Dr. Ronald Marchese:* "From the Monumental to the Miniature: Armenian Religious Embroideries from the Constantinople Churches"

*\*Aram Kouyoumdjian, Esq.:* "Arrested Development: Western Armenian Theater in the Nineteenth Century"

*\*Dr. Vatché Mankerian:* "Armenian Contributions to the Musical Life of the Ottoman Empire and Beyond"

*\*Van Aroian:* "The Abdullah Frères and Armenian Contribution to Photography in the Ottoman Empire"

**Afternoon Session (1:30PM-4:30PM)**

*\*Dr. Christina Maranci:* "Armenian Architects of the Ottoman Empire"


*\*Dr. Ronald Marchese:* "Metal and Other Objects from the Armenian Orthodox Churches of Constantinople: Treasures of Faith and Their Sociological Implications"

*\*Mariam Vardanian:* "Armenian Silversmiths and Goldsmiths of the Ottoman Empire"

*\*Dr. Susan Pattie:* "The Extraordinary Lives of Ordinary Things: Material Culture among Armenians in the Ottoman Empire"

*\*Special exhibition from the private collection of Mr. Osep Tokat, author of the book Armenian Master Silversmiths, will be held at the Ararat-Eskijian Museum only on October 18\**

**FOR FURTHER INFORMATION, PLEASE CONTACT**  
The Museum (818) 838-4862 or e-mail at [Maggiegoschin@gmail.com](mailto:Maggiegoschin@gmail.com)  
Maggie Mangassarian-Goschin (818) 357-1606  
Prof. Vahram Shemmassian: (818) 677-3456; [vahram.shemmassian@csun.edu](mailto:vahram.shemmassian@csun.edu)  
FREE ADMISSION DONATIONS WELCOME



### ԿՈՒՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԱՌԱԲԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՕՐ ՀԱՄԱՐ

Կուրծքով կերակրելը լավ է ո՛չ միայն փոքրիկին, այլև՝ մօր համար:

Կուրծքով կերակրելու առաւելութիւններէն մէկը այն է, որ անհիկա երկկողմանի գործընթաց է, որուն ժամանակ երկու կողմերն ալ փոխադարձաբար կը ստանան եւ կու տան օգուտ: Երբ փոքրիկը կուրծք կը ծծէ, մայրը անոր կաթ կու տայ, իսկ փոքրիկը կ'օժանդակէ օքսիտոցինի արտադրութեան, որ կ'օգնէ արգանդի կրծատման եւ վերադարձին՝ նախկին տեսքին: Մայրը կը մեծցնէ եւ կը «ձեւաւորէ» փոքրիկը, իսկ փոքրիկը անոր կը վերադարձնէ նախկին կառուցուածքը: Հարկ է նշել, որ կուրծքով կերակրելը չի փոխեր կուրծքին ձեւը, անհիկա կը ձեւափոխուի միայն յղութեան ժամանակ:

Կուրծքով կերակրելը կը

հանգստացնէ մայրն ու փոքրիկը: Կուրծքի կաթը կը պարունակէ սպիտակուց, որ յագեանալու զգացումին գուզընթաց փոքրիկին քուն կը պարգեւէ: Փոքրիկի ծծելուն հետեւանքով գոյացած հորմոնները կերակրող մօր վրայ նոյնպէս հանգստացուցիչ ազդեցութիւն կ'ունենան: Ատիկա յատկապէս օգտակար է վատ քնացող կիներուն համար: Ասիկա փոխադարձ օգտակարութեան փայլուն օրինակ է, երբ կը հետեւինք բնութեան ձայնին:

Կուրծքով կերակրելը կը նպաստէ մօր առողջութեան: Կուրծքով կերակրող մայրերը հազուադէպօրէն կը հիւանդանան կաթնագեղձերու եւ ձուարաններու քաղցկեղով, կուրծք ծծող փոքրիկները աւելի առողջ կ'ըլլան: Մօր կուրծքի կաթը նորածինի լաւագոյն սնունդն է:

### ԸՆԿՈՅՁԸ ԿԸ ԿԱՆԽԷ ՄՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Միրտ-անօթային հիւանդութիւնները ամբողջ աշխարհի մէջ կը հանդիսանան մահացութեան հիմնական պատճառ: Տարբեր հետազոտութիւններ ցոյց տուած են, որ ընկոյզի օգտագործումը կրնայ գրեթէ մէկ երրորդով նուազեցնել սրտի հիւանդութիւնները:

Հիմնուելով նախկին հետազոտութիւններու տուեալներուն վրայ՝ փորձագէտները պարզած են թէ ընկոյզի ամէնօրեայ չափաբաժինը 28-29%-ով նուազեցուցած է սրտ-անօթային հիւանդութիւններուն վտանգը: Բացի անկէ, այլ հիւանդութիւններէն մահացութեան վտանգը նոյնպէս նուազած է 17%-ով:

Ընկոյզը միայն փոքր ազդեցութիւն ունի շաքարախտի եւ

ինսուլինի զարգացման վտանգի առումով:

Ընկոյզը կը պարունակէ կենսասնիւթեր, հանքային նիւթեր եւ յագեցած ճարպաթթուներ, որոնք կը նուազեցնեն քրիսթերոլի մակարդակը եւ մարմինն մէջ եղող բոլոր բնական շաքարային առողջութեան դպրոցը կատարած էր հետազոտութիւն ենթադրաբար քաղցկեղի վրայ ընկոյզի ազդեցութեան վերաբերեալ: Շաքարը երկու անգամ եւ աւելի յաճախ մէկ բուռ ընկոյզ կերած կիներուն համար ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի զարգացման հաւանականութիւնը 35%-ով նուազ էր ընկոյզ չօգտագործողներուն համեմատ:

### ՍՆՆԴԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԸ ԿԸ ՓՃԱՑՆԵՆ ՄԱՇԿԸ ԵՒ ՉԵՆ ԱԶԱՏԵՐ ԱԲԵԼՈՐԴ ԿՇԻՌՔԵՆ

Ջուրեղի սնունդի ուսումնարանի սննդագէտ Ամանտա Փէյն կը պնդէ, որ ցած ջերմութով խմիչքները, փոխանակ լուծելու աւելորդ կշիռքի խնդիրները, կը խորացնեն զանոնք եւ բացի այդ՝ կը յառաջանեն մաշկի արագ ծերացում:

Անոր ուսումնասիրութիւն ներուն իբրեւ արդիւնք պարզուած է, որ սննդագիտական խմիչքներու սիրահարները իւրապատուկ կառուցուածք ունին՝ փորի եւ գտակատեղի վրայ աւելորդ ճարպային ծալքերով: Ասիկա կը վերաբերի նաեւ անոնց, որոնք կը նախընտրեն այնպիսի խմիչքներ, որոնց մէջ շաքարի փոխարէն կ'օգտագործուին շաքարի փոխարինողներ:

Ատիկա տեղի կ'ունենայ այն բանին հետեւանքով, որ մարդուն

ստամոքսին մէջ բնակող մանրէները չեն կրնար իւրացնել շաքարի փոխարինողները, որուն իբրեւ հետեւանք նիւթափոխանակութիւնը կը խախտի, եւ մարդը կը կորսնցնէ վերահսկողութիւնը իր ախորժակին վրայ, անոր համար դժուար կ'ըլլայ զսպել ինքզինք:

Մննդագիտական խմիչքներու մեծ մասին մէջ պարունակուող ֆոսֆորային թթուն մարմնէն դուրս կը հանէ հանքային նիւթերը, որոնք անհրաժեշտ են ոսկորներու ամրութեան, ատամներու առողջութեան եւ մաշկի գեղեցկութեան համար: Մննդագիտական ըմպելիներու պարբերական օգտագործումէն դէմքի մաշկը կը չորնայ, եւ կը մեծնայ ժամանակէն շուտ կնճիռներու յառաջացման վտանգը:

### Ո՞ՐՆ Է ԿՆՈՋ ԴԺԲԱԽՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՈՒՄ

Բազմաթիւ ուսումնասիրութիւններէ ետք Աւստրալիոյ գիտնականները յայտարարած են.

Կնոջ համար առաջին թշնամին ընկճախտն է:

Վերջին ժամանակներս ընկճախտով տառապող մարդոց թիւը այնքան մեծցած է, որ ամբողջ աշխարհի բժիշկները զայն կ'անուանեն խաղաղ համաճարակ: Ըստ վիճակագրութեան նոյնինքն ընկճախտն է, որ առաւելագոյնս բացասական կերպով կ'ազդէ կնոջ

կեանքի տեւողութեան եւ առողջութեան վրայ: Անոր վնասը շատ աւելի մեծ է, քան շաքար մը ծանր հիւանդութիւնները:

Ի դէպ, տղամարդոց պարագային եւս ընկճախտը յաճախ կը պատահի:

Գլխաւոր խնդիրը ընկճախտի բուժումն է: Անկէ փրկուելու համար շատ քիչերը կը դիմեն բժիշկի, նոյնիսկ, երբ մշտապէս վատ տրամադրութիւն եւ կեանքի նկատմամբ հետաքրքրութեան բացակայութիւն կ'ունենան:

### Պառաւի ուլեր

Շարունակուած էջ 2-էն

րում էր ինչ-որ անհասկանալի դասակարգերի հեգեմոնիա, նրանց մայրաքաղաքը Երեւանն է, ոչ թէ հեռուոր Մոսկուան, նրանք ծառայել եւ ծառայելու են հայկական բանակում, նրանց պետական լեզուն միշտ եղել է հայերէնը: Գումարած դրան՝ նրանք երբեք որեւէ խոչընդոտ չեն ունեցել որեւէ տեղեկատուութիւն ստանալու համար: Բնութագրել այդ ամէնը միայն որպէս առաւելութիւն՝ հնարաւոր է՝ այստեղ կան թէ դրական, թէ բացասական կողմեր: Բայց որ ընդհանուր առմամբ մենք 23 տարի շարժուել ենք դէպի աւելի ազատ եւ անկաշկանդ դրսեւորումներ՝ ինձ համար ակնյայտ է: Եւ գուցէ իսկապէս պէտք է 40 տարի՝ ստրկութեան ոգին յաղթահարելու համար: Վերջին տարիների մեր

հասարակական եւ յատկապէս քաղաքական կեանքում աւելացել է մարագմի չափաբաժինը: Դա երեւում է թէկուզ խորհրդարանի նիստերի բովանդակութիւնից: Կամ, այսպէս կոչուած, քաղաքական պայքարից, երբ մէկը փողով մարդկանց ուղարկում է հանրահաւաքի, միւսը փողով ուղարկում է հակահանրահաւաքի, եւ այնտեղ մարդիկ սկսում են իրար հետ վիճել: Դրանք բացարձակապէս անիմաստ քայլեր են, դրանով ոչ մի հարց չի լուծուում: Բայց այդ ամէնը գնացող սերնդի ահագնացող մարագմ է, որը, յուսով եմ, կը տեւի ամենաշատը 20 տարի: Ստրկութեան ոգին առայժմ թեւեւ չ'է հաղթահարուում: Այդ երեւոյթներն առայժմ գերիշխում են: Բայց դրանք պատմական հեռանկարի առումով «պառաւի ուլեր» են:

«ԱՌԱՒՕՏ»

### MEDICAL-Ը ՊԻՏԻ ԿԱՐՈՂԱՆԱՅ ՏՈԿԱԼ

Շարունակուած էջ 14-էն

թեան ենթարկելու դրութիւնը ցոյց կու տայ արդէն որ անհիկա նիւթաակա ղժուարութեանց մէջ է: Դիւրին չէ միլիոններով անձերու ձրի առողջապահական ապահովագրութիւն տալ: Ուրեմն վերստրութեան հարցադրումին պա-

տասխանելը դիւրին չէ: Նոյնիսկ եթէ բոլոր medicalները փոխուին HMOի մը, պատկան իշխանութիւնները պիտի չկրնան վճարել ըլլալիք բոլոր ծախսերը: Պետութիւնը ձեւ մը պէտք է գտնէ որպէսզի բարեկեցիկ ընտանիքները կարենան բժշկական ծախսեր հոգալ:

**ՅՆՈՐԱՒՈՐԱՆՔ**  
Ամուսնացեալք  
Սեւակ Չալեան ընդ Նայիրի Ղարիպեան  
«Մասիս» կը շնորհաւորէ նորապսակ զոյգը եւ անոնց ծնողները:  
Այս ուրախ առիթով Ս.Գ.Հ.Կ. «Արսէն Կիտուր» մասնաճիւղը կը շնորհաւորէ նորապսակ զոյգը եւ ծնողները, յատկապէս Տէր եւ Տիկ. Կարօ եւ Մարալ Ղարիպեանները: Առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս»ին:

**ԽՆԴԱԿՅՈՒԹԻՒՆ**  
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Հիլտա Աճեմեան բախտաւորուած են մանչ գաւակով մը, զոր անուանած են Յարութիւն:  
Մեր շնորհաւորութիւնները ծնողքին ու ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Սեդրակ եւ Ալին Աճեմեաններուն:  
«Մասիս»

**SAVE THE DATE**  
AMAA-Haigazian University Celebratory Banquet in honor of Dr. Mihran Agbabian and George R. Phillips, Esq.; Saturday, November 15, 2014, 6 pm, Beverly Hills Hotel, \$200; Information: Julie Aharonian 818-368-5266; Katia Kermoyan 818-242-5064.

**SAVE THE DATE**  
DECEMBER 6 - Saturday: Western Diocese Eleventh Annual Christmas Ball; 7:00 p.m. Reception and Gala Tree Lighting Ceremony, 8:00 p.m. Dinner-Dance and Program honoring Ten Young Professional Community Activists, Nazareth and Sima Kalaydjian Hall, 3325 North Glenoaks Blvd., Burbank. For further info call the Western Diocese (818) 558-7474.

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Email: massis2@earthlink.net

**«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի  
Երեկոյեան ժամը 10:00-ից 12:30  
Կլէմտայի 380-րդ կայանից

### ՇՈՒՇԻԿ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ



**ԹԱՄԱՐԱ ԳՈՀԱՐ ԽԱԼԱԹԵԱՆԻ** մահուան քառասունքին առիթով յաւարտ **Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կիրակի, 26 Հոկտեմբեր, 2014, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd, Pasadena CA 91107:**

**Սգակիրներ**  
Տէր եւ Տիկ. Գաղիկ եւ Գայեանէ Ղազարեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Անիշա Ղազարեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Էտիք եւ Ամալիա Ղազարեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Աշոտ եւ Նարինէ Ղազարեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Սամուէլ եւ Էլմիրա Ղազարեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Ղազարեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Փիթըր եւ Լիլիթ Katz-Ղազարեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Հայկ եւ Լալա Քոչարեան-Ղազարեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ալլա Աճէմեան-Ղազարեան եւ զաւակները  
Հոգեհանգստեան արարողութեան հետք հոգեճաշ պիտի մատուցուի  
Old Yerevan ճաշարանին մէջ, 1351 E. Colorado Street, Glendale, CA 91205

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

**ՅՈՎՍԷՓ ԱՍԱՏՐԵԱՆԻ** մահուան տխուր առիթով **Ս.Դ.Հ.Կ.** «Արսէն Կիտուր» մասնաճիւղը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս զաւակին Տէր եւ Տիկ. Ոսկերեան եւ Կարինէ Ղազարեանին:

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

**ՅՈՎՍԷՓ ԱՍԱՏՐԵԱՆԻ** մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Իսահակ եւ Ազապի Եսայեան կը յայտնեն իրենց խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի համայն պարագաներուն: Առ այդ \$200 տուար կը նուիրեն Հ.Մ.Մ.ին:

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

**ՇՈՒՇԻԿ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ** մահուան տխուր առիթով «Մասիս» իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Արփի Մարգարեաններուն:

### ՎԱՏ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԼԱՒ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԼԱՒ Է

**Շարունակուած էջ 6-էն**  
Իրականութեան հետ: Դժուար է, երբ մասնատուած Ուկրաինայի հրամանատարներն առաջնորդուած են խամաճիկային հոգեբանութեամբ, անկախ նրանից, որ կողմից են ձգուած թէլերը: Ակնյայտ է՝ Ուկրաինայի նախագահն ու նրա թիմը, ինչպէս եւ արեւելեան հատուածը, փորձում են Արեւմուտքից ու Ռուսաստանից եկող հրահանգներով կառավարուել, հաշուի չառնելով, որ ներկայ դրբերգութեան պատճառը այս երկու աշխար-

հաքաքաքական բեւեռների միմի-անց ոչնչացնելու քաղաքականութեամբ է պայմանաւորուած: Թեեւ «Վատ խաղաղութիւնը լաւ պատերազմից լաւ է» յայտնի կարգախօսն արդիական է պատմութեան նաեւ մեր ժամանակահատուածում, այդուհանդերձ, իրադարձութիւնների զարգացման էլոկլիցիան ենթադրել է տալիս, որ Ուկրաինան նոր պատերազմի է պատրաստուում: Այնպէս որ, գոնէ հիմա անշտորհակալ գործ է այս երկրի ապագայի ձեւաչափը բանաձեւել:

### Հ.Բ.Ը.Ս. Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան

**Շարունակուած էջ 15-էն**  
առաքելութիւնը՝ մեր հայ համայնքին հասցնելով ղեկավար սերունդներ:  
Հիւրասիրութեան սեղաններու շուրջ ներկաները շնորհաւորեցին Դոկտ. Արմինէ Մովսիսեանը: Ջերմ էր միջնորդութեամբ, խօսուէն եւ յուսադրող:  
Մեր կողմէ եւս կը շնորհաւորենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան շրջանակը, վարժարանի ղեկավարութիւնը, ուսուցչական կազմը, ծնողներն ու աշակերտութիւնը այս ուրախ

առիթով, մաղթելով Դոկտ. Մովսիսեանին շարունակել իր բարի եւ արի գործը ի սպաս հայ աշակերտութեան. այն տարբերութեամբ, որ այսօր անոր ուսերուն վրայ դրուած է յաւելեալ պատասխանատուութիւն, որուն պտուղը պիտի քաղենք մօտիկ ապագային: Վերջապէս, պտուղը ծառէն հեռու չ'իջնար, կ'ըսէ հայկական արածը:  
Ջերմ շնորհակալութիւններ եւ կրթա-դաստիարակչական առաքելութեանդ նորանոր յաջողութիւններ, տիպար հայուհի՝ Արմինէ Մովսիսեան:

### ՅԱՐՈՒԹ ՔԵՇԻՇԵԱՆ (1953-2014)

Թախիծն ու ցաւը մեզ համակեց, երբ լսեցինք արժանաւոր հայորդի Յարութ Քէշիշեանի մահուան բօթը, որը պատահեց Սեպտեմբերի 25-ին հինգշաբթի օր՝ Թեհրանում: Մահաթուր եւ անողոք հիւանդութիւնը նրան կեանքից զրկեց վաղաժամ եւ բոլորին՝ ընտանեկան կազմին, հարազատներին, գործակիցներին, իր աշակերտներին ու ուսանողներին, ընկերներին ու ծանօթներին սուգի մատնեց: Սիրելի անձի, ուսման մշակի, մտաւորական ղէմքի եւ հասարակական գործչի կորուստը ծանր է նստում, ափսոսանքով ու տխրութեամբ է ընդունուում, ցաւով ու վիշտով է ընկալուում, քանզի նրանց փոխարինողները սակաւ են: Նա երկար պայքարեց անբարիշտ հիւանդութեան ղէմ, սակայն սպառուեց եւ հիւժուեց ու կեանքից հեռացաւ անժամանակ, նա դեռ անելիքներ, ցանկութիւններ, նպատակներ եւ սպասելիքներ ունէր, նա դեռ պիտի ապրէր եւ վայելէր իր տարիների ծառայութեան եւ աշխատանքի պտուղը, արգասիքը, թոռներ ունենար, նրանց եւս փոխանցէր՝ գործունեայ, ծառայասէր, ազնիւ եւ համեստ հայ մարդու հոգեբանութեան եւ նկարագրի վեհ արժանիքները: Նա անբասիր հասարակական գործիչ էր, վաստակաւոր ուսուցիչ, իրանահայ հասարակական եւ մշակութային կեանքում իր կարեւոր ներդրումն ունեցած, նա սրտցաւ եւ նուիրուած հայր էր իր ընտանիքի համար, բարոյական արժէքների նկատմամբ բժախնդիր, հայրենասէր ու ազգասէր եւ հաւատարիմ ընկեր ու ուղեկից, նա ճանաչուած ղէմք էր համայնքում իր շնորհալի կարողութիւնների շնորհիւ յարգանքի եւ պատուի էր արժանանում:

»Թախիշեանի« եւ »Խարազմի« դրպրոցներում: Իսկ դրանից յետոյ որպէս երկրաչափութեան ուսուցիչ դասաւանդել է կոնկրետի (համալսարանի մուտքի քննութեանց) նաստատութիւններում: Նա մեծ փորձ ունէր նաեւ մաթեմատիկական եւ երկրաչափական հարցեր եւ խնդիրներ պատրաստելու մէջ ու քանի գրքեր է հրատարակել այդ բնագաւառում, որոնք բարձր գնահատանքի են արժանացել գիտա-ուսումնական հաստատութիւնների կողմից: Երիտասարդական շրջանից զբաղուել է ազգային հասարակական աշխատանքներով: Համալսարանում լայնածաւալ աշխատանք է տարել ոչ-հայ ուսանողներին Հայ Դատի եւ մշակութի հետ ծանօթացնելու համար: Նոյն տարիներին, ընկերների օգնութեամբ, հայկական դպրոցներում կազմակերպել է անվճար դասարաններ: Փերիոդ կրթասիրաց միութեան Թեհրանի մասնաճիւղի հիմնադիրների վարչութեան նախագահն էր: 2000-2002 թթ.ակադեմիաներին եղել է ԹՀԹԹ-եմական խորհրդի անդամ եւ նոյն մարմնի կապը Կրթական խորհրդի հետ: 2004 թ. Սասուն քաղաքամասից ընտրուել է որպէս ԹՀԹ 13-րդ Պատգամաւորական ժողովի անդամ: 2008 թ.՝ Իրանի Իսլամական խորհրդարանի 8-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան անկախ միութիւնների եւ կառույցների կողմից առաջադրուել է որպէս թեկնածու:

Այս ցաւալի եւ տխուր առիթով մեր խորագրաց ցաւակցութիւններն ու վշտակցութիւններն ենք յայտնում սիրելի տիկ. Վալոբին, Կարէնին եւ Սերինին, Նարէին եւ Արմէնին, Նայիրին, եղբայրներին, քոյրերին ու նաեւ բոլոր հարազատներին, բարեկամներին եւ նրան ճանաչողներին: Խոր է վիշտը, մեծ է կորուստը, որը պէտք է համբերութեամբ տանել եւ ամոքուել Յարութի արժանիքներով:

Իր անդէնական յաւերժական բնակարանում թող հոգին խաղաղութեամբ հանգչի, քանզի իր արժանաւոր գաւակները կը շարունակեն ճանապարհը պայծառ ու անմար պահելով իրենց հօր յիշատակը:

Թող հողը թէթեւ նստի վրան: Ռուբէն Կորիւն Հոկտեմբերի 4, 2014 թիւ

Կենսագրական համառօտ գծեր Յարութ Քէշիշեանը ծնուել է 1953թ. Իրանի Փերիս գաւառի Սվարան գիւղում Տարրական եւ միջնակարգ կրթութիւնը ստացել է Աբադան քաղաքի Հայոց ազգ. »Ազաբ« դպրոցում: 1976 թ.-ին աւարտել է Թեհրանի պետական համալսարանի Մաթեմատիկայի եւ համակարգչային ծրագրաւորման բուհը: Ուսանողութեան շրջանում որպէս մաթեմատիկայի ուսուցիչ դասաւանդել է հայոց ազգային »Թունեան« եւ »Թովմասեան« դպրոցներում, Իրանի Իսլամական յեղափոխութիւնից յետոյ՝ հայոց »Ս. Սողոմոնեան« եւ պարսկական

### ԽԱՐԲԵՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

**Շարունակուած էջ 16-էն**  
սեղան մը՝ լի Խարբերդի մասին ցարդ տպուած գիրքերով, որոնք վաճառման յատկացուած էին, ինչպէս նաեւ միութեան անդամակցութեան յատուկ դիմումագիր-հարցարան մը: Ձեռնարկի պատմական միջնորդութիւն խանդավառուած՝ տէր

եւ տիկին Ռուբէն եւ Հռիփ Աճէմեան միութեան նուիրեցին 500 տուար:  
Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ինչպէս նաեւ ներկայ գտնուող բոլոր համալսարանի դպրոցները, իբրեւ յիշատակ՝ վարչութեան հետ լուսանկարուեցան:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

### ՅՈՒՇԵՐ ԵՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

#### Շարունակուած էջ 7-էն

րուն կ'երթար: Ալբրիտի չափ հակառակ էր ծխախոտին: Զինք յարգող նախկին սաներէն մէկը հեռաձայն կը ստանայ ժամկոչեանէն, անունը լսելուն պէս ծխախոտը գրպանը կը դնէ:

Բարեբախտաբար հրդէհ չի յառաջանար: Իր տան մէջ իր անուանակոչութիւնը բարեկենդանին եւ վարդանանցին կը գուգադիպէր: Ան ուսուցիչները կը հիւրասիրէր բողոքականեան ոճով, թէյ եւ խմորեղէններ: Որպէս տնօրէն եւս իւրապատկութիւններ ունէր: Նախապէս տնօրէնին կողմէ նշուած պարտականութիւններու քանակը ուսուցիչին կողմէ սրբագրուելէ ետք պէտք է դրուէր տնօրէնին սենեակին առջեւ գտնուող սեղանին վրայ: Մէկ մէկ ստուգուելէ ետք իր կողմէ, կարգ մը նշումներով կը վերադարձուէին ուսուցիչներուն: Որպէս տնօրէն ճշդած կ'ըլլար լեզուական նիւթերու պարագային քանի շարադրութիւն, քանի ուղղագրութիւն, քանի քերական կան վարժութիւն պէտք է իրագործուէին շաբաթական դրութեամբ: Միւս նիւթերուն համար ալ քանի գրաւոր տրուած ըլլալը պիտի նշուէր:

Մնայուն ուսուցիչին համար անհաճոյ պարտականութիւն էր իր դասապահներուն ներկայ գտնուիլ դասարան, որպէսզի երբ անհրաժեշտ պարագային, անակնկալ հիւր կամ ծնողք, դասարանը ձգել ստիպուած ըլլար, ուսուցիչը զինք փոխարինէր հսկողութեան համար:

Հսկողութեան նշանակումները կիսամեայ եւ ամսական ընդունութիւն ներուհի համար կը կատարէր սրահին մէջ ըստ աշխարհագրական դիրքի: Օրինակ մը տալու համար՝ աջ թեքումէ ետք ձախակողմեան անկիւնի գրասեղանի ետին: Երկու հոգիներ կային որ շատ կը չարչարուէին այս մատնանշումէն, մին արուեստագէտ Փոլ Կիրակոսեանն էր միւսն ալ տնտես Յարութիւն Աճէմեանն էր (տնտեսին համար այս սահմանային ոճը անհասկնալի էր նոյնիսկ տնօրէնին մատնանշած առարկային ուր ըլլալը չէր գտնուէր):

Գարոց եկող առաջին անձը կ'ըլլար եւ վերջին մեկնողը, կէսօրուան ճաշի չէր երթար: Առտու լաւ նախաճաշած կուգար իրիկունն ալ լաւ ընթրիք կ'ընէր: Իրեն համար այս դրութիւնը նաեւ առողջապահական նշանակութիւն ունէր: Չէր արտօներ ուսուցիչներուն աշակերտները ֆիզիքական պատիժի ենթարկել (ծեծել): Օր մը աշակերտ մը ապուսկեցի, տեսնելով ապուսկելս, տղաս ըսաւ, ականջը կրնայ իսլանալ եւ դուն պատասխանատու կը մնաս: Ինք գլանով աշակերտներուն ափին կը գարնէր, որը թէեւ կը ցաւցնէր սակայն հետեւանքներ չէր ունենար: Ինք նաշարժի վարորդութիւնը կանուխէն սորված էր եւ շարժավարին բացակայութեան աշակերտները ինքը կը հաւաքէր: Իր կարծիքով տնօրէնը «ամենագէտ» եւ «ամենակարող» անձը պէտք է ըլլար: Օրին մէկը ան կազմակերպած էր խմբային հեծելաբաշտ աւարտական դասարանին եւ նոր շրջանաւարտ եղած աշակերտներուն մասնակցութեամբ դէպի ժայչիլ: Ինքը կը հանդիսանար գլուխը այդ հեծելախումբներուն:

Չմրան եւ յատկապէս Մարտ ամիսներուն թիթեղաշէն Սահակեան դպրոցի թիթեղներէն քանի մը հատը թուած կ'ըլլային:

Ան կանուխէն դպրոց ժամանելուն պէս իր առաջին գործը կը նկատէր զանոնք մուրճով ամրացնելը: Տնօրէնին դաստիարակչական դերին խոր համոզումով ամէն առաւօտ դաստիարակչական պահ հաստատած էր եւ Աւետարանի ընթերցումէն ետք ընթերցումին վերաբերեալ նիւթերուն շուրջ կը խօսէր: Ուսուցիչներուն ալ առիթ կու տար որ խօսին այլազան բարոյագիտական նիւթերու մասին: Շաբաթ մը պատահեցաւ հետեւեալը: Հայր սպաննուած էր եղբայրսպան կուխներու ընթացքին: Շաբթուան խօսելիքներէն մէկուն նիւթը հայրական սէրն էր: Յուզումի շեշտէս անդրադարձաւ որ կորսնցուցած եմ իմ կեանքիս թանկագին հակը: Չուշացաւ խօսքէս ետք ինծի գալու եւ ներողութիւն խնդրելու այդ նիւթը ինծի սահմանած ըլլալուն համար:

Խոստովանիմ որ անգիր խօսքի վարժութիւնը եւ փորձառութիւնը Սահակեանի յարկին տակ ձեռք ձգած եմ հաստատուած այդ պահերու շնորհիւ: Բենիամին ժամկոչեան ինք եւս անգիր կը խօսէր եւ ան լաւ ճարտասան էր: Կը չիշեմ իր առինքնող խօսքը Աւետիք Իսահակեանի 80-ամեակի ձեռնարկին ինչպէս նաեւ Մեսրոպ Մաշտոցի 1600 ամեակի խօսքը, երկուքն ալ Եռնէսքոյի սրահին մէջ:

Սահակեան մարզադաշտ ունենալը մեծ առաւելութիւն կու տար հին Սահակեանին, կէսօրուայ դադարին աշակերտները կը հաւաքէի դաշտ ու ֆութպոլի փորձ մրցում կ'ընէինք:

Օր մը խաղը վերջանալէն վերջ, ուսուցիչներուն աշակերտներուն հետ խաղը քաջալերելու սկզբունքով գնահատեց բաց... յատկով - դուն ի՞նչ աշակերտներուն խուճիկն հետ խաղալով միւս աշակերտներուն վրայ հսկողութիւնը կը տուժէ եւ կը թերանայ:

Տարօրինակ խօսելու եւ յարբերելու եղանակ որդեգրած էր ուսուցիչներուն հետ: Մէկ ուսուցչական ժողովէն միւս ժողովը ուսուցչարան դրուած թեւադրանքի տեսրակ մը ունէր, անոր մէջ իր նշմարած ուսուցիչներու թերութիւնները կ'արձանագրէր ընդհանրական ոճով որ վիրաւորական չէր ըլլար անոնց համար:

Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանի հովանաւորութեամբ Անթիլիասի մէջ կազմակերպուած ուսուցչական Ա. Համագումարին տնօրէն մը հաստատում մը կ'ընէ ըսելով թէ ուսուցիչը իրաւունք չունի հիւանդանալու: Ժամկոչեան կ'առարկէ այս անհեթեթ գաղափարին դէմ: Յաջորդ օրը նոյն տնօրէնը կը բացակայի համագումարէն հիւանդութեան պատճառաւ: Ժամկոչեանի մօտեցումը իրաւացի էր:

Սահակեանի տարեկան ձեռնարկներու ծիրին մէջ կար նաեւ Մայիս 10, Սահակեանի օրը, որը ծնունդ առած էր Բենիամին ժամկոչեանի Հայաստան կատարած առաջին այցելութեանէն որպէս պետական հիւր: Մայիս 10-ին ան մէկտեղում ունեցած էր 1945-ին հայրենիք ներգաղթած նախկին Սահակեանցիներու հետ: Ան յարմար նկատեց այդ օրը կոչել Սահակեանի Օր, որ շարունակուեցաւ երկար տարիներ:

1974 Մայիս 10-ին կազմակերպուած էր հաւաքոյթ մը Սահակեանի մէջ տօնելու համար Սահակեանի Օրը: Օրուան խորհուրդին մասին խօսեցաւ Տիկ. Ազատուհի Սիմոնեան Գալաչճեան, որուն

խօսքին մէջ յատկանշական էր սա միտքը թէ յաջորդող տարին, որ պիտի հանդիսանայ նոր Սահակեանի կառուցչին մէջ առաջին ուսումնական տարեշրջանը, ինչ պէտք էր փոխադրել այնտեղ հին Սահակեանէն: Անշուշտ կրթական հարուստ փորձը, աւանդութիւնները, յիշողութիւնները: Բայց կարելի պիտի չըլլար փոխադրել Սահակեանի երկարակեաց ծառերը որոնք ունէին իրենց սաղարթներուն ետին պահուած անմոռանալի յիշողութիւնները այս հիւանդուց հաս տատութեան: Բենիամին ժամկոչեան պատասխան խօսքով հանդէս եկաւ: Ան ըսաւ որ ինք պիտի երթար իր աշակերտներուն հետ նոր Սահակեան եւ պիտի հանդիսանար շաղախը հին եւ նորակառուց Սահակեանին միջեւ, փոխանցելով իր հարուստ կրթական փորձառութիւնը գալիք Սահակեանցի սերունդներուն: Ափսոս որ չիբրականացաւ իր

երազը տնօրէնութեան պաշտօնը շարունակելու նոր Սահակեանի յարկին տակ: Ան դառնութեամբ բաժնուեցաւ իր անձին հետ նոյնացած Սահակեանին:

Շրջափակին մէջ շրջագայած մէկ պահուէ ըսաւ - Սահակեանի բանալիները քեզի միայն կրնամ վստահել...:

Ուսուցչութեան տասերորդ տարին տնօրէն նշանակուեցայ Ազգային Ռուբինեան վարժարանին: Պատահական հանդիպումի մը ընթացքին, երբ արդէն Ռուբինեանէն Սահակեան փոխադրուած էի, ըսաւ - դուն արդէն տնօրէն էիր, ինչ պէտք ունէիր Սահակեան տնօրէն երթալու:

- Ես չգացի ըսի, զիս տարին: Երանի գացած չըլլայի, պատերազմը ամբողջ վրայէս անցաւ: Որպէս ուսուցիչ, որպէս տնօրէն, որպէս հասարակական մարդ, իւրապա տուկ մարդ էր Բենիամին ժամկոչեան:

### ԿՐՕՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

#### Շարունակուած էջ 6-էն

ցեղէն, Մարտը Ամազիլ ցեղէն եւ շատ մը ուրիշ երկիրներ. շատեր իսլամութիւնը ընդունելով սերունդէ սերունդ իրենց ազգութիւնն ալ կորսնցուցին եւ արաբ կոչուեցան:

Օսմանցի թուրքը լաւ ըմբռնեց իսլամութեան դասը եւ Սուլթանը Աբբասեաններէն ժառանգեց Խալիֆայութիւնը երբ արաբներու արեւը իսլամացաւ, եւ հարիւրաւոր տարիներ կրօնքը գործադրեց իբր գէնք իր կայսրութեան սահմանները ընդարձակելու համար: Սակայն 1924ին Աթաթուրքը վերջ դրաւ Խալիֆայութեան: Արաբական եւ այլ իսլամական երկիրները ներկայիս հանրապետութիւններ, թագաւորութիւններ եւ էմիրութիւններ են:

Պարսկաստանը ամենամեծ Շիա երկիրը ըլլալով ինքն է որ կ'առաջնորդէ Շիիներու աշխարհը եւ կը փորձէ Շիիութիւնը տարածել իսլամներուն մէջ: Մշտնապահ Արաբիան մեծ դեր կը խաղայ ուսուցչական իրաւունքները մէջ: (Իսլամն էլ մուսլիմին)ը, իսլամ եղբայրները, իսլամական երրորդ ուժն է, որուն ներկայ ջատագովը թուրքիոյ նախագահ էրտողանն է. անոնք սուննի են բայց ուսուցչականութիւնը դէմ. կայ նաեւ Եգիպտոսի սուննի (էլ Ազհար) կրօնական կեդրոնը, եւ այլ իսլամական շարժումներ. բոլորն ալ կ'երագեն, սակայն չեն արտայայտուիր Խալիֆայութեան մասին կամ համաիսլամական երկիր մը ունենալու մասին:

Սուրիոյ քաղաքական պատերազմի ընթացքին երեւան եկաւ ՏԱԻՇ շարժումը (Իսլամական Պետութիւնը Իրաքի եւ Սուրիոյ մէջ) որը սկիզբին (էլ քալիտա)ին հետ կապեր ունէր սակայն աւելի ուշ այդ կապերը իզուցեցան եւ կարճ ժամանակուայ մէջ ՏԱԻՇը (Քալիտա)էն ալ աւելի վաղաք դարձաւ. ՏԱԻՇը Յունիս 2014ին, Իրաքի Մուսուլ քաղաքը եւ շրջակայքը գրաւեց, հոն (Իսլամական Պետութիւն) հռչակեց եւ Խալիֆայ ընտրեց անոր (մուպայէէ), հաւատարմութիւն եւ հնազանդութիւն յայտնեց. Ապու Պէքըր էլ Պաղատտի-ին իր կարգին ժողովուրդին պարտադրեց 1400- տարուայ նեխած իսլամական օրէնքները: Անոր արաբներու առաջին իսլամիքային անունը ընտրած են (Ապու Պէքըր) եւ անոր Տոհմաճառը հասցուցին (Քուրէյշ) տոհմին, որ նոյն Մուհամմէտ մարգարէի տոհմն է, անոր

անձին առաւել հաւաստիացում տալու համար. ՏԱԻՇի զինեալներու շարքին կան արաբներ զանազան երկիրներէ եւ օտարներ, աֆղան, չեչեն, թուրք, եւ այլն:

Որոշ արաբական երկիրներ նիւթականով օգնեցին ՏԱԻՇին, Ամերիկան եւ Եւրոպան այլ միջոցներով, իսկ Թուրքիան շատ մեծ դեր ունեցաւ եւ տակաւին կը շարունակէ ամէն ձեւով օգնել անոնց. բոլորը ջանք թափեցին ՏԱԻՇը ոտքի կանգնեցնելու համար Ասատին դէմ, սակայն ներկայիս կը թուի թէ (ձին)ը դուրս է ելած իր շիշէն, եւ բոլորն ալ վախի մատնած է:

ՏԱԻՇը հազարաւոր երեխաներ, կիներ եւ տղաքոյրիկ սպաննեց, մարդկանց զոյքերը գողցաւ, կիները եւ աղջիկները գերութեան առաւ եւ անոնց վաճառեց ստրուկներու շուկաներուն մէջ, պղծեց անոնց կրօնքը եւ քարկոծեց գանոնք, եւ դեռ...:

Սակայն ո՞վ է ՏԱԻՇը.... անիկա իսլամութեան արտադրանքն է, ծնած է անոր ծոցէն եւ կը գործադրէ անոր փիլիսոփայութիւնը. անիկա արտերկրէն չէ ներմուծուած. անիկա հիմնուած է իսլամներու օրէնքներու վրայ, (Քուրան)ին եւ (Շարիա)ին վրայ, եւ անոնցմէ դուրս որեւէ նորութիւն չէ բերած, այլ ընդհակառակը միշտ յայտնած է թէ ինք կը հետեւի իր իսլամ անաչառ նախնիներուն եւ այն, ինչ որ կ'իրագործէ այդ նախնիներուն վարդապետութիւնն է որ մինչեւ այսօր կը քարոզուի մզկիթներէ ներս եւ կը դասուանուի դպրոցներու մէջ: Գլխատուած, արիւնահեղութիւնը, թալանը, գերութիւնը, մարդկանց վաճառքը եւ այլն, բոլորն ալ առկայ են իսլամներու պատմութեան մէջ սկիզբէն ի վեր, եւ յաճախ կը քարոզուին ու կը քաջալերուին ծայրայեղ իսլամ կղերականներու եւ կրօնապետերու կողմէն. կարելի չէ ըսել թէ իսլամ կրօնքը անմեղ է այդ արարքներէն: Եթէ իսլամները կ'ուզեն քաղաքակիրթ աշխարհի յարգանքին արժանանալ, եւ կը ցանկանան մաս կազմել միջազգային ընկերութեան, ապա իսլամ ժամանակակից կրօնապետերը եւ իսլամական մեծ կեդրոնները պէտք է ընդունին այդ իրողութիւնները եւ ջանք թափեն վերաքննելու, արդիականացնելու իրենց օրէնքները որպէսզի անոնք մասապատասխանեն ժամանակակից մարդկութեան օրէնքներուն:

Արդեօք կ'ուզեն, եւ եթէ ուզեն, պիտի կարենա՞ն: